№ 170 ԵՐԵՔՇԱԲԹԻ 5 ՕԳՈՍՏՈՍԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 5 ՕԳՈՍՏՈՍԻ № 170

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.

Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի։

ՊԱՐՏՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Քաղաքագլխի Պաշտօնակատարը

րանով դիմում է Թիֆլիսի բոլոր ազգաբնակութեանը, դասային, հասարակական, վարկային և այլ ընկերութիւններին, կազմակերպութիւններին և մասնաւոր անձանց, ջերմ կերպով հրաւէր կարդալով՝ օգնել պատերազմի պատճառով տուժած անձերին։ Ներկայ օրերին իւրաքանչիւր քաղաքացու պարտականութիւնն է օգնութիւն ընձեռել այն մարդկանց, րոնք հայրենիքի համար զոհ են բերում իրանց կեանքը՝ տանը թողնելով ընտանիքը և րեխաներին։ Թող իւրաքանչիւրը օգնէ ինչով կարող է։ Քաղաքային Վարչութիւնը հաւատացած է, որ Թիֆլիսի ամբողջ ազգաբնակութիւնը ջերմ արձագանք կը տայ իր կոչին և օգնութեան կը հասնէ կարիքաւորներին—դրամով, իրեղէններով և մթերքներով։

Նուիրատուութիւնները հանգանակելու և նրանց կարգադրելու համար՝ Քաղաքային Ուպրավայում, քաղաքագլխի պաշտօնակատարի նախագահութեամբ և զանազան վարչութիւնների, հասարակական և դասային հիմնարկութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ կազմվում է առանձին կոմիտէ, որը այս օրերս կը ձեռնարկէ իր գործողութիւններին։

Նուիրատուութիւնները դրամով, իրեղէններով և մթերքներով ընդունվում են ամէն օր, բաց չառած նաև տօն օրերը, Քաղաքային Ուպրավայում առաւօտ. ժամը 10-ից մինչև եր. ժամը 3-ը։

Նուիրատուների անուանացուցակը կը տպվի լրագիրներում։ առ. 747. 2—2

ԳԻՄՆԱԶԻԱ Վ. Ա. ԼԵՎԱՆԴՈՎՍԿԻԻ

Պետական գիմնազիաների իրաւունքներով, երկսեռ աշակերտների համար։
Գունիբսկայա, 10, սեփ. տուն, տելէֆ. 754

Ընդունելութեան քննութիւնները սեպտեմ. 1-ին և 2-ին
Վերաքննութիւնները » 3-ին
Մաղթանք » 5-ին
առաւ. ժ. 9-ին

Գիմնազիայի դիւանատունը բաց է օգոստ. 16-ից առաւ. ժամը 11-ից մինչև ցեր. ժ. 2-ը։
(Հ.Կ.) առ. 744. 10—3

ՖՐԷԲԵԼԵՎԵԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Պետերբուրգի միամեայ դասընթացքների ծրագրով, նպատակ ունենալով ունկնդիրներին ծանօթացնել թէ տեսականօրէն և թէ գործնականօրէն «Մանկական Պարտէզի» գործը վարելու հետ։ Մանրամասնութիւնները և պայմանները տեղեկանալ Վելիկոկնեաժեսկայա փող. № 109 կուրսերի կառավարչուհի իշխ. Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկից։ առ. (10. 24.) 748. 3—1

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԴԷՊՔԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Այն օրից, յուլիսի 10-ից, երբ ւստրիան պատերազմ յայտարարելով ոքրիկ Սերբիային՝ պատճառ դարձաւ մաեւրոպական պատերազմի բռնկման, անցել է 22—25 օր։ Ահագին և նակնկալ դէպքեր տեղի ունեցան և ակայն դեռ ոչ մի ենթադրութիւն չէ րելի անել, թէ այդ դէպքերը ինչ րգացումն կը ստանան նոյն իսկ մօտ պագայում։

Կարո՞ղ էինք ենթադրել յուլիսի 0-ին, թէ Աւստրիայի կողմից պատերազմի յայտարարութիւնը փոքրիկ երբիային այն հետևանքը կունենայ, յուլիսի 31-ին, 20 օրից յետոյ, րոպայի պետութիւնների մի մասը միանայ և կը սպառազինվի՝ դատելու և պատժելու համար Աւստրիային և Գերմանիային, որոնց գործած իրաւութիւնները և անօրէնութիւնները անթիւ և անհամար են մարդկութեան առաջ. կարո՞ղ էինք երևակայել, որ լայնածաւալ Ռուսաստանի տ կը միանան բացի Սերբիայից և րնօգորիայից նաև Ֆրանսիան, Անգլիան, Բէլգիան, Պորտուգալիան, այդ տաստանը կատարելու համար։

Եւ այսօր մենք կանգնած ենք մի կայական պատմութեան մէջ անօրինակ տեսարանի առաջ։ Չորս հզօր լայնածաւալ պետութիւններ՝ Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, Եապոնիա, հզօր թէ ծովի և թէ ցամաքի ա, և չորս փոքր պետութիւններ՝ րբիա, Չերնօգորիա, Բէլգիա, Պորտուգալիա, ուրեմն 8 պետութիւններ ացած են պատժելու Աւստրիային և րմանիային, որոնք եղան համաշխարհային խաղաղութիւնը խախտողները և որոնց շնորհիւ ամբողջ 30 տարի քաղաքակիրթ մարդկութիւնը հեծում է դաժան միլիտարիզմի ծանրութեան ներքոյ։ Առ այժմ չէզոք ում են Եւրոպայում Իտալիան, Սպանիան, Հոլլանդիան, Շվէդիան, Նորվէգիան, Թիւրքիան, Բոլգարիան, Յունաստանը և Ռումինիան։ Սակայն շատ հաւանական է, որ Սպանիան և Իտալիան ևս վերջ ի վերջոյ միջամտեն և միանան Գերմանիայի և Աւստրիայի պատժումը յանձն առնող դաշնակցութեան։ Եւ դա շատ հաւանական է, որովհետև Սպանիան Ֆրանսիայի մի տեսակ դաշնակիցն է և ցեղակիցը և նրա շահերը պահանջում են Գերմանիայի կործանումը։ Իտալիան թէև կապված է դաշնագրով Աւստրիայի և Գերմանիայի հետ և պէտք է նրանց աջակցէր իր զէնքով, բայց, առաջին, իտալական ամբողջ ազգը դէմ է Աւստրիային իր պատմական և ազգային զգացումով և տենչում է յետ գրաւել Աւստրիայից Տրիէստը, այն է շարունակել մեծ հայրենասէր Կավուրի քաղաքականութիւնը. երկրորդ, Աւստրիան իր վերջին գործողութիւններով բաւական գրգռեց Իտալիային։

Շատ հաւանական է, որ Եւրոպայում միակ չէզոք և պատերազմին չը մասնակցող երկիրներ մնան Շվէդիան և Նորվեգիան, բայց միւս երկիրները—Թիւրքիա, Բոլգարիա, Յունաստան և Ռումինիա—նոյնպէս մասնակցեն պատերազմին։ Թիւրքիան իր զօրքերը մոբիլիզացիայի ենթարկելով և իր մի քանի կասկածելի գործողութիւններով յօգուտ Գերմանիայի յարուցել է Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի զայրոյթը։ Թիւրքիային կարող է միանալ, որքան էլ տարօրինակ թւի, Բոլգարիան, բայց այդ դէպքում նրանց դէմ դուրս կը գան Յունաստանը և Ռումինիան, որով Աւստրիայի և Գերմանիայի կողմը կը լինեն միայն Բոլգարիան և Թիւրքիան։

Քաղաքակրթութեան և մարդկութեան շահերի տեսակէտից գուցէ և շատ ցանկալի էր, որ Թիւրքիան գործէր մի այդպիսի մեծ սխալ, որովհետև այդ դէպքում վերջապէս նրա գոյութեան վերջ կը դրվէր և Թիւրքիան բաժանվելով մարդկութիւնը կազատվէր մի բարբարոս ուժից։

Եւ ահա խրոխտ և ամբարտաւան Աւստրիան և Գերմանիան ունեն իրանց դէմ մի սոսկալի, մի վիթխարի կոալիցիա, միաբանութիւն, որ կոչված է վերջ դնելու տեւտոնների բռնապետութեան և ամբարտաւանութեան։

Իրան հզօր երևակայող խրոխտ Աւստրիան դեռ մինչև այսօր չը կարողացաւ գրաւել Բէլգրադը, որ նոյն իսկ պաշտպանված չէ։ Իրան հզօր երևակայող ամբարտաւան Վիլհէլմ կայսրի զօրքերը, որոնք վստահ էին թէ Բէլգիայով կանցնեն իբրև մի զբօսավայրով, դեռ մինչև այսօր չը կարողացան ամբողջովին տիրանալ Լիէժ (Լիւտիխ) քաղաքին, այլ, ընդհակառակը, կորուստներ ունեցան այդտեղ։

Եւ շատ մեծ մարգարէ չը պէտք է լինել գուշակելու համար, թէ Աւստրիան և Գերմանիան սխալվել են իրանց հաշիւների մէջ և իրանք իրանց ձեռքով նստացրել են իրանց՝ ազգերի դատարանի առաջ, մեղադրեալների նստարանի վրա։

Դեռ Աւստրիան մինչև վերջերս կարող էր յուսալ, որ Ֆրանսիան և Անգլիան իրան դէմ պատերազմ չեն յայտարարի, բայց այսօր, երբ այդ պետութիւններն այդ քայլն ևս արին, նրա համար փրկութեան յոյս չը կայ։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՒՏՈՆՈՄԻԱՆ

ԳԵՐԱԳՈՅՆ ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԿՈՉԸ ԼԵՀԵՐԻՆ

Լեհեր։ Հասել է ժամը, երբ ձեր հայրերի և պապերի նուիրական բաղձանքը կարող է իրականանալ։ Կէս դար առաջ Լեհաստանի կենդանի գործը յօշոտվեց, բայց չը մեռաւ նրա հոգին։ Նա ապրում էր այն յոյսով, թէ կը գայ լեհ ժողովրդի յարութեան ու Մեծն Ռուսաստանի հետ եղբայրական հաշտութեան ժամը։ Ռուսաց զօրքերը ձեզ այդ հաշտութեան աւետիքն են բերում։

Թող ջնջվեն լեհ ժողովրդին բաժան-բաժան անող սահմանները, թող նա վերստին միանայ Ռուսաց Ցարի հովանու ներքոյ։ Այդ հովանու ներքոյ նորից կը ծնվի Լեհաստանը, ազատ իր հաւատով, լեզւով ու ինքնավարութեամբ։

Մի բան է սպասում ձեզանից Ռուսաստանը,—նոյն տեսակ յարգանք դէպի այն ժողովուրդների իրաւունքները, որոնց հետ մեզ կապել է պատմութիւնը։

Բաց սրտով ու եղբայրաբար մեկնված ձեռքով գալիս է ձեզ ընդառաջ Մեծն Ռուսիան. նա հաւատում է, որ չէ ժանգոտվել Գրիւնվալդի մօտ թշնամուն վանողի սուրը։ Խաղաղ ովկեանի ափերից մինչև հիւսիսային ծովերը շարժվում են ռուսական մարտիկները, նոր կեանքի արշալոյսն է բացվում ձեզ համար։

Թող փայլէ նորից այդ արշալոյսին և Խաչի նշանը՝ ժողովուրդների յարութեան ու տանջանքների այդ սիմվոլը։

Գերագոյն զօրահրամանատար
Գեներալ-ադիւտանտ՝ ՆԻԿՈԼԱՅ
1 օգոստոսի 1914 թ. (Հ. Գ.)

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
2—3 օգոստոսի

ԼՈՆԴՈՆ.—Լիէժից հաղորդում են, որ գերմանացիք դադարեցրին գետի աջ ափին գտնվող բերդերի ռմբակոծութիւնը և կենտրոնացնում են ուժերը ձախ ափին գտնվող բերդերի դէմ։ Ռմբակոծութեան է ենթարկվելու գլխաւորապէս Պոնտիս բերդը։

Բրիւսէլից տեղեկացնում են, որ ֆրանսիական զօրքերի տեղափոխութիւնը դէպի բելգիական երկիրն աւարտվեց։ Նամուրի բնակիչները զինաթափ են արված, որպէսզի գերմանացիք առիթ չունենան վրէժ լուծելու։

Բելգիացի գնդապետ Մօրշովիլէտը ուղարկվեց գեներալ Ժոֆֆրի շտաբը։

Տիրլէմոնից ստացված վերջին տեղեկութիւնների համաձայն, գերմանացիք սաստկացնում են ընդհանուր արշաւանքը։ Նրանց հետևոտն գնդերը դիմում են դէպի Տոնգրու և Սէնտրոնդու։ Սպասվում է, որ գերմանական մի քանի զօրաբանակ յարձակում գործեն Դիէստի և Արշոտի վրա։ Գերմանական հեծելազօրը շարժվում է Գասէլտից աջ։ Հեծանւորները և զինւորները պատմում են, որ գերմանացիք սպանում են վիրաւորներին։

ԼՈՆԴՈՆ.—Մամուլի բիւրօն հաղորդում է, որ ստացված չեն առանձին կարևոր տեղեկութիւններ, բայց մատնանշում են, որ գերմանացիք փորձում են տիրել դաշնակից ուժերի ամենաձախ թևը։ Պաշտօնական աղբիւրներից յայտնում են, որ ֆրանս-բելգիական արտիլէրիան գերմանականից աւելի լաւ է։ Գերմանական հետևոտն գնդերը խուսափում են սուիններով ճակատամարտելուց։

ՓԱՐԻԶ.—Բէլգիական և ֆրանսիական զօրքերի միջև կապ հաստատվեց գլխաւոր զօրաբանակները ուղարկված օֆիցէրների միջոցով։

ՓԱՐԻԶ.—Օգոստ. 1-ին 200 զինւորական հեծանւոր շրջապատեցին 400 հոգուց բաղկացած գերմանական մի զօրամաս, շատերին սպանեցին, 50 հոգու գերեցին։

Սալ քաղաքը և լեռնանցքը ֆրանսիացիք վերցրին, տիրապետելով նաև մօտակայ բարձունքին։ Ֆրանսիական արտիլէրիան անցաւ գերմանական դիրքերից, այդպիսով դիւրացնելով ֆրանսիական հետևակ գնդերի գործը։ Ֆրանսիացիք կորցրին միայն մի քանի վիրաւոր։ Սալում գտնվել են մեծ քանակութեամբ ռազմամթերք։

Գերմանական զօրքերը, որոնք ջարդվել էին յուլիսի 31-ին Դիէստի մօտ, նահանջեցին դէպի Գասէլտ։ Թէև այդ զօրքերը շատ յոգնած էին, այնուամենայնիւ նրանք փորձեցին նորից յարձակման դիմել բելգիացիների դէմ։ Ցարձակման դիմած գերմանական հեծելազօրը նահանջեց։

Անգլօ-ֆրանսիական զօրքերը պաշտպանում են ֆրանսիական զօրքերի ցամաք իջնելու գործողութիւնները. Ալժիրից զօրքեր են մտնում Ֆրանսիա. դաշնակից գործող բանակների ուտելիքը ստացվում է անարգել։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ գերմանացիք անյաջող փորձ արին անակնկալ յարձակում գործելու Նանսիի վրա, ինչպէս նաև բելգիական սահմանի վրա։ Երկու յարձակումներն էլ յետ են մղված։

ՓԱՐԻԶ.—Զինւորական մինիստրութիւնը պաշտօնապէս յայտնում է, որ լուրջ կռիւ սկսվեց Բլէմոն-Սիրէյ-Ավրի-Կուրի շրջակայքում, ուր ֆրանսիացիք ճակատամարտեցին բաւարական զօրաբանակի դէմ։ Փայլուն գրոհից յետոյ ֆրանսիացիք գրաւեցին Բլէմոն և Սիրէ գիւղերը։ Գերմանական զօրամասերը փախան անկարգ, ձգելով ճանապարհին սպանվածներին և վիրաւորներին։ Ֆրանսիացիներին անցան շատ գերիներ։ Ֆրանսիական զօրքերը շարունակում են առաջխաղացութիւնը Վերին-Վոգեզների շրջանում։

Գերմանացիք Վերին-Էլզասում նահանջում են։ Ֆրանսիացիք յետ են խլել Տանն գիւղաքաղաքը։

Գերիները հաւատացնում են, որ 15-րդ զօրաբանակի հրամանատար գեներալ Դէյմլինգը վիրաւորվել է։

Բրօշի հովտում ֆրանսիացիք ձեռք ձգեցին գերմանական դրօշակ։

Ֆրանսիական երկու աէրօպլան, թռչելով Վերտէնից Մէցի վրայով, քաղաքին մօտ ռումբ նետեցին օդագնացութեան շինութեան մէջ, ուր գտնվում էին գերմանական «Ցէպպէլինները»։ Գերմանացիք մօտ 200 թնդանօթ պարպեցին, բայց ֆրանսիացի օդագնացները անվնաս վերադարձան։ Բուօյնի մօտերը ֆրանսիացիք ձեռք են ձգել մի աէրօպլան ևս երկու օֆիցէրների հետ։

Բլէմոնի և Սիրէի մօտ տեղի ունեցած կռիւը առանձնապէս տաք էր և տարվեց շատ մեծ աջողութեամբ։

Ուրբաթ երեկոյ ֆրանսիական մի զօրաբանակ յարձակում գործեց բաւարական զօրաբանակի վրա և հարկադրեց նրան նահանջել դէպի Սարբուրգ։ Գերմանացիք լուրջ վնասներ կրեցին։

Ուրբաթ օրը ֆրանսիացիք գրաւեցին Դոնօնին ու գերեցին 500 գերմանացի։

Ֆրանսիացի զօրքերը մեծ թւով գերմանական շոգենաւեր են բռնել Մարօկկօյի նաւահանգիստներում և դրանով անվաւեր ընդունեցին ալժէզիրասեան արձանագրութիւնը Գերմանիայի վերաբերութեամբ։

Գերմանացիք մեծագոյն ոճիր ու բարբարոսութիւն են գործադրում. Վերին Էլզասի Դաննէմարիում նրանք հրդեհել են տները։ Փողոցները լի են գնդակահարված մարդկանցով։

ՆԻՇ.—Յուլիսի 31-ին աւստրիացիք փորձեցին անցնել Սավան արտիլէրիայի պաշտպանութեամբ։ Սերբիական արտիլէրիան, մեծ կորուստներ պատճառելով թշնամուն, ստիպեց նրան անկարգօրէն նահանջել։ Սակայն, միևնոյն ժամանակ, թշնամուն աւելի մեծաքանակ ուժերով աջողվեց անցնել Դրինան՝ Լօզնիկայի մօտերը և Սավան՝ Շաբացի մօտերը։

Սերբիական արտիլէրեան Բէլգրադի և Սմեդերևօյի միջև ջրասոյզ արաւ երկու նաւ, որոնց վրա կային աւստրիական զինւորներ։ Այդ րօպէին գետի միւս ափին երևաց թշնամու մի գունդ՝ հեծեալ զումարտակի հետ։ Սերբիական արտիլէրիան ցրեց թշնամուն։ Թշնամին փորձեց զօրք իջեցնել Դունայի մօտ Տէկիայից ոչ հեռու, բայց ապարդիւն։

Ամեն գիշեր Բէլգրադը ռմբակոծվում է։

ՆԻՇ.—Սերբերը գրաւեցին Սուխոդօլը Վիլէգրադի մօտ, և Բուեակը Լիմ գետից ոչ հեռու։

ՑԷՏԻՆԻԷ.—Չերնօգորական «Պրէաս Բիւոյին» հաղորդում են Բուդվից. «Ժամը 9 ու 40 րօպէին ֆրանսիական նաւատորմը, որ գնում էր հարաւ-արևմուտքից, ռմբակոծեց աւստրիական նաւատորմը բաց ծովի վրա։ Աւստրիական երկու զրահանաւ ջրասոյզ եղան, երրորդը այրվում է, չորրորդը ազատվեց, մեկնելով Կատարրօյի նաւահանգստի ուղղութեամբ։ Կռիւը տևեց մի ժամից աւելի»։

Երկրորդ օրն է՝ չերնօգորական զօրքերը խռոնդուտ կռիւ են մղում Լիզանիցա լեռանը տիրապետելու համար՝ Գրախովի շրջանում։ Թշնամին յարձակում է գործում մեծ ուժերով։ Չերնօգորցիք առ այժմ կորցրել են 45 սպանված և վիրաւոր։ Չերնօգորական արևմտեան սահմանի դիմաց կանգնում է աւստրիական 16-րդ զօրաբանակը։ Սարաեւօյում գտնվող 15-րդ զօրաբանակը ուղարկված է թշնամուն օգնելու դէպի Գասկօ։ Աւստրիական նաւատորմը ռմբակոծեց Լովչէնի բոլոր դիրքերը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մեր զօրքերը ցիրուցան արին աւստրիական զօրամասերին Սմոտրիչ գետի հովտում։ Աւստրիական մի գունդ փորձում է արշաւել դէպի Կամենէց-Պօդօլսկ, առայժմ գտնվում է մեր սահմանին մօտ Չերնօկօզլիցա գիւղի շրջանում։

Մեր օդագնացները գնահատելի տեղեկութիւններ են բերում թշնամու դիրքերի մասին։

Օգ. 1-ին գերմանական երկու հակա-ականանաւ անհետևանք կրակեցին Պօլանգէնի մաքսատունը։ Գերմանական հեծելազօրը կենտրոնանում է Պիլկալէնի և Խօմէնտօվօյի շրջանում, հետևոտն գնդերը՝ Ստալուպէնէնի մօտ. Լանդվէրի զօրամասերը հեռացան Շմալէնինկէնից դէպի հարաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—(Պաշտօնական)։ Գեներալ շտաբի գլխաւոր վարչութիւնը հաղորդում է, որ յուլիսի 31-ին Կելցի շրջակայքում մեր հեծելազօրը ցրեց 800 սոկոլի, որոնց պաշտպանում էր աւստրիական մի զօրամաս։ Դրանից յետոյ թշնամին հեռացաւ Կէլցից և Խէնիցից։ Միևնոյն օրը գերմանական 1-ին հետևոտն զօրաբանակի մասերը յարձակման դիմեցին Գուտօվ—Բոյեարի և Էյդկունէն—Կիբէկլա ռազմագծի վրա։ Արտիլէրիական թնդանօթաձգութիւնից յետոյ թշնամին նահանջեց։ Օգ. 1-ին մեր զօրքերը հալածեցին յարձակում գործած թշնամուն։ Օրվայ ընթացքում մանր ընդհարումներ եղան Միրէնէսկինի, Դրօզդովէնի և Լակէնի մօտերը։ Այդ կէտերից հեռանալիս հակառակորդն այրում էր դրանց։ Մեր հեծելազօրը գրաւել է Մարգրաբօվօն։

Շվէդական լրագիրները հաղորդում են, որ գերմանական զօրահրամանատարներ հանդիսանում են արևմտեան ռազմական մասում գեներալ Ֆօն-Մօլտկէ, բելգիական պատերազմաբեմում՝ գեներալ Ֆօն-Բիւլօվ, արևելեան ռազմամասում՝ գեներալ Ֆօն-Պրիտվից։

ՏՕԿԻՕ.—Անգլիական յածանաւերը բռնեցին գերմանական «Պրինց Վօլդէմար» և «Գէօրգ» շոգենաւերին, որոնք մթերք էին տանում։

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
2—3 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Վարշավայի գեներալ-նահանգապետը ստացաւ Բարձրագոյն հետևեալ հեռագիրը.

Ուրախ եղայ, երբ իմացայ Վարշավայի զինւորական շրջանի պահեստի զինւորների զինւորակոչի փայլուն ընթացքի և երկրի բովանդակ ազգաբնակութեան հայրենասիրական ոգևորութեան մասին, վկայ, որ այդ ամբողջ երկիրը պատրաստ է Իմ առաջին իսկ կոչին կանգնել ռուսական զօրքի շարքերում՝ ի պաշտպանութիւն մեր ընդհանուր հայրենիքի՝ մեր և ամբողջ սլաւօնականութեան գարաւոր թշնամիների դէմ։ Յանձնարարում եմ ձեզ յայտնել Իմ շնորհակալութիւնը լեհական թագաւորութեան նահանգների բոլոր բնակիչներին՝ տէրութեան համար ներկայ ծանր ժամանակ սիրոյ ու Ինձ և Ռուսաստանին հպատակութեան զգացմունքներ արտայայտելուն համար։

ՆԻԿՈԼԱՅ

ՄՈՍԿՎԱ.—Մոսկվայի նահանգական վարչութեան նախագահ Շլիպէն, ի պատասխանի Ռուսաստանի բոլոր զեմստվօների ներկայացուցիչների ամենահպատակ հեռագրի, արժանացաւ Բարձրագոյն հետևեալ հեռագրին.

Անկեղծօրէն շնորհակալ եմ զեմստվօների ներկայացուցիչներին սիրոյ և հպատակութեան զգացմունքների համար։ Չեմ կասկածում զեմստվային աշխատանքի աջողութեանը վիրաւոր զինուորականների վիճակը թեթևացնելու գործում։ ՆԻԿՈԼԱՅ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — (Պաշտօնական)։ Նորին Մեծութիւնները Թագաւոր Կայսրը, Թագուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնա, Գահաժառանգ Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկոլայեվիչի և Օգոստափառ Դուստրների հետ օգոստոսի 3-ին բարեհաճեցին Պետերհօֆից մեկնել Մոսկվա։ Ստորագրեց Կայսերական Տան մինիստր գեներալ-ադիւտանտ կոմս Ֆրեդերիկս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Երեկոյեան 10 ժամ 20 րոպէին Նորին Մեծութիւնները Թագաւոր Կայսր և Թագուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնա Թագաժառանգի և Օգոստափառ Դուստրների հետ բարեհաճեցին մեկնել մի քանի օրով Մոսկվա՝ երկրպագելու նրա սրբութիւններին և ընդունելու զօրքերի և համայնքների ներկայացուցիչներին այն ժամանակ, երբ Կրեմլից Նորին Մեծութիւնները դիմեն Ուսպէնսկի տաճարը։

Արտաքին գործերի մինիստրութեան տեղեկատու բիւրօն յայտարարում է, որ արտասահմանում եղած ռուսահպատակների ուր լինելու մասին ստացված բազմաթիւ հարցումներին հնարաւորութիւն չունենալով բոլոր հարցնողներին առանձին պատասխանել, արտասահմանում եղած անձերի մասին մի ցուցակ կը կախի մինիստրութեան մէջ և նոյնը կը տպի Պետերբուրգի լրագիրներում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Զինուորակոչութեան վարչութիւնը յայտարարում է, որ այն երկրապահ զինուորները, որոնք սովորում են դպրոցներում և որոնց՝ դպրոցի դասընթացքը վերջացնելու համար ժամանակ է տրված, ազատվում են զէնքի կանչվելուց։ Այն ուսանողները, որոնք պահեստիներ են, առ այժմ զէնքի չեն կոչվում և նրանց զինուորութեան կոչելը յետաձգվում է մինչև իրանց ուսման վերջը կամ երբ այդ մասին Բարձրագոյն կարգադրութիւն կը լինի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—46 կաթոլիկ չեխ, ի թիւս որոց 6 կին, մտան ուղղափառ դաւանութեան գիրկը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ռուսաց սինօդը հրահանգագրեց արբեցողութեան դէմ մաքառել։ Մատնանշելով ներկայ ծանր ժամանակի վրա, որ պահանջում է ժողովրդից առանձին բարոյական ոյժ, սինօդը յորդորում է ուղղափառ եկեղեցու հովւապետներին եռանդով քարոզել ժուժկալութիւն եկեղեցու բեմից։

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ.—Ռուսական զէնքի յաղթութեան համար մաղթանք կատարելուց յետոյ, լեհերը ցոյց սարքեցին «կեցցէ՛ Թագաւոր Կայսրը», «կեցցէ՛ Ռուսաստանը» բացագանչութիւններով։ Լեհերը դիմեցին նահանգապետին, խնդրելով առ ոտս Կայսրի արկանել հաւատարիմ հպատակութեան ու սիրոյ զգացմունքներ բոլոր լեհերի կողմից։

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

2—3 օգոստոսի

ՊԱՐԻԶ.—Գերմանացի գերիների և վիրաւորների մօտ գտնված վաւերագրերի մէջ կան գրութիւններ, որոնք վկայում են, որ գերմանացի զինուորների սնունդը վատ է և որ նրանք շուտով են հիասթափվում։

Կառավարութիւնը վճռեց հրատարակել ամենօրեայ պատերազմական բիւլլըտէն զօրքերի համար։ Բիւլլըտէնը լինելու է մինիստրների խորհրդի նախագահ Վիվիանիի առանձին հովանաւորութեան տակ։

335 լիւկսէմբուրգեան հպատակներ դիմեցին ֆրանսիական կառավարութեանը, խնդրելով ընդունել իրանց ֆրանսիական զօրքի մէջ։

Անգլիական զօրահրամանատար Ֆրէնչը այցելեց Պուանկարէին։

ՊԱՐԻԶ.—Բոլոր շրջանների խորհուրդները միաձայն կայացրած որոշումներով հրճուանք են յայտնում ֆրանսիական քաջարի զօրքերի և բուռն համակրանք արտայայտում դաշնակից ազգերի զօրքերի հասցէին։

ՊԱՐԻԶ.—Հրատարակվեց հրովարտակ այն մասին, որ իր ոյժի մէջ է մտնում յուլիսի 23-ի օրէնքը՝ ազգային ինքնապաշտպանութեան կարիքների համար 2.754,000 ֆրանկ յատկացնելու մասին։

ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2—3 օգոստոսի

ԼՕՆԴՕՆ.— Պատերազմական տեղեկութիւնները, որոնք մինչև այժմ չափազանց աղքատ էին, հաւանօրէն բոլորովին կը դադարեն։ Անգլիական մամուլի բիւրօն ոչ մի տեղեկութիւն չէ տալիս բրիտանական պատերազմական տեղափոխութիւնների մասին, ինչպէս և ֆրանսիացիք և բելգիացիք։ Պատերազմը մղվում է բացարձակ գաղտնապահութեամբ։ Մամուլի բիւրօն նախազգուշացնում է հասարակութեանը՝ չը հաւատալ լուրերին, ասելով որ բրիտանական աջողութիւնների և անաջողութիւնների մասին կը տրվեն պաշտօնական հաղորդագրութիւններ։

Արևելեան Պրուսիայում ռուս զօրքերի առաջխաղացման տեղեկութիւնը աւստրիական երկրում, և Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի կոչը լեհերին այստեղ գեղեցիկ տպաւորութիւն թողին։ Եւրոպայի ազատութեան համար մղվող հսկայական կռւի աջողելքը աներկբայ է համարվում։

Ուէլսի պրինցի հիմնած ֆօնդը առաջին շաբաթվայ ընթացքում տուեց աւելի քան մի միլիօն ֆունտ ստերլինգ։ Բոլոր կոչերը անգլիացիների մէջ արձագանք են գտնում։ Լօնդօնի լաւագոյն շինութիւններից շատերի վրա ծածանվում է Կարմիր Խաչի դրօշակը։ Ծառաստաններում կամաւորները զինուորական վարժութիւններ են կատարում։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

2—3 օգոստոսի

ՏՕԿԻՕ.—Հրատարակվեց եապօնական կառավարութեան դեկլարացիան, որի մէջ ասված է, թէ զօրահաւաք է յայտարարված Հեռաւոր Արևելքում խաղաղութիւնը պահպանելու համար, ինչպէս նաև այդ խաղաղութիւնը խախտելու հնարաւոր աղբիւրը վերացնելու համար։ Եապօնիան միջոցներ է ձեռք առնում պաշտպանելու անգլօ-եապօնական դաշնակցութեամբ նախատեսված շահերը, որի առիթով դիմում է Գերմանիային, պահանջելով անյապաղ հանել եապօնական և չինական ջրերից ռազմանաւերը կամ զինաթափ անել նրանց, և յանձնել Եապօնիային անվճար բոլոր կոնցէսիաները Կիաօ-Ջաօյում մինչև սեպտ. 2-ը, որպէսզի Եապօնիան էլ իր հերթին վերադարձնէ Չինաստանին։

Այդ պահանջներին մինչև օգոստոսի 10-ի ցերեկվայ ժամը 12-ը պատասխան չը տալու դէպքում, Եապօնիան իրան է վերապահում գործողութեան ազատութիւնը։

Ուլտիմատումը յանձնվեց գերմանական դեսպանին։

ՏՕԿԻՕ.—«Ռեազան» շոգենաւը գերմանացիք քարածխատար նաւի են վերածել։

ՆԻՒ-ԵՕՐԿ.—Համբուրգ-ամերիկեան նաւագնաց ընկերութիւնը յայտնում է, որ ինքը քննում է Ամերիկայում գտնվող շոգենաւերը գնելու քանի մի առաջարկութիւններ։ Շոգենաւերը գնահատվում են 20 միլիօն դօլլար։

ԼԻՍԱԲՕՆ.—Սենատի և պատգամաւորների պալատի արտակարգ նիստում մինիստր-նախագահը յայտնեց, որ Պորտուգալիան ոչ մի դէպքում չի հրաժարվի այն պարտաւորութիւններից, որ դնում է նրա վրա Անգլիայի հետ կապած դաշնակցութիւնը։ Սակայն այս յայտարարութիւնից չի կարելի հետևցնել, թէ Պորտուգալիան այժմ իսկ կը հրաժարվի իր չէզոքութիւնից։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.—Լօնդօնից հեռագրում են լրագրական այն լուրերը, թէ Անգլիան ուլտիմատում է ուղղել Թիւրքիային։

ԼՕՆԴՕՆ. — Ռէյտէրի գործակալութիւնը հաղորդում է, որ Թիւրքաց կառավարութեանը պահանջ է ուղարկված՝ անմիջապէս ճանապարհելու հայրենիք գերմանական «Գէբէն» և «Բրէսլաու» յածանաւերի օֆիցէրներին և նաւաստիներին։

ԼՕՆԴՕՆ.—Վիէննայից հեռագրում են, որ փոխ-ծովակալ Վիալը նշանակվել է աւստրիական ծովային մինիստր Միլլօյի փոխարէն, որ հրաժարական տուեց։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.—Բեռլինի լրագիրները հաղորդում են, որ գերմանական կառավարութիւնը հրամայել է ձերբակալել մինչև պատերազմի վերջը Գերմանիայում գտնվող 45,000 ռուս շինական բանուորներին։ Ապստամբութեան կամ հրկիզումների դէպքում, ազգաբնակութեանը լանդրատների պահանջով բաժանված են հրացաններ և ռազմամթերք՝ բանուորների վրա հսկողութիւն ունենալու համար։

Ռուս փախստականների յորձանքը աստիճանաբար դադարում է։ Բոլոր մեկնողները շնորհակալութեամբ են խօսում ռուսական միսսիայի, ինչպէս նաև Համբուրգի սպանական հիւպատոսի և Կօպէնհագէնի սպանական դեսպանի հոգատարութեան մասին։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.—«Կոր. Բիւրօյին» հաղորդում են Բուդապեշտից, որ այս տարվայ պահեստի զինուորների զօրակոչը դեռ չէ սկսված։ Այդ մասին կարգադրութիւն կը լինի ութ կամ տաս օրվայ ընթացքում։ Այնուհետև զէնքի կը կանչվեն բոլոր նրանք, որոնք արդէն ծառայել են։ Գիւղացիական աշխատանքները կատարող զօրամասերը նոյնպէս ետ են կանչված զէնքի տակ։

ՍՕՖԻԱ.—Օպպօզիցիօն լրագիրներում աւելի ու աւելի յամառ տոնով է խօսվում Բուլգարիայի և Ռուսաստանի, ինչպէս նաև երբեակ համաձայնութեան շահերի ընդհանուր լինելու գաղափարի մասին։ Լրագիրները կարծում են, որ Բուլգարիան վերջ ի վերջոյ որոշակի կը յարվէ Ռուսաստանի կողմը։

ՀՌՈՄ.—Լրագիրները հերքում են Սկիւտարին չերնոգորցիներից գրաւելու տեղեկութիւնը։

ՀՌՈՄ.—Ժամանեց Բեռլինի իտալական դեսպանը։

«Մեսսաջերօյի» տեղեկութիւնների համաձայն, Իտալիան իր զօրքերը յետ է կանչել Սկիւտարից։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Յուլիսի 11-ին զէնքի են կանչվում դարձեալ նոր պահեստիներ և արտիլէրիան։

ԿԱՀԻՐԷ.—Կառավարութիւնը յայտարարեց, որ Եգիպտոսը գտնվում է պատերազմական վիճակում, և յանձնարարեց Անգլիային պաշտպանել Եգիպտոսը։

ՈՒՐՄԻԱ.—Հայերը հանդիսաւոր ցոյց կազմեցին ի պատիւ Ռուսաստանի։ Օվացիաներ արին ֆրանսիական, անգլիական և ռուսական հիւպատոսներին։ Նոյնպիսի տրամադրութիւն է տիրում Թաւրիզի և Խոյի հայերի մէջ։

ՈՒՐԳԱ.—Գլխաւոր կառատոնը խուտուխտայի կարգադրութեամբ երէկ գիշեր սկսվեց հանդիսաւոր մաղթանք ռուս զօրքերին յաղթութիւն պարգևելու համար։ Մաղթանքին մասնակցում էին 10,000 լամեր գլխաւոր լամի հետ։ Երեկոյեան ժ. 1-ին մաղթանքին եկաւ առաջին դիւանագիտական գործակալը գեն.-հիւպատոսարանի կազմով։ Բոլոր մօնղօլական մինիստրները ամբողջ գիշերը ներկայ էին մաղթանքին։ Միաժամանակ իր պաշտօնավայրում մաղթանք է կատարել խուտուխտան։

ՆԻՒ-ԵՕՐԿ.—Բացվեց Պանամայի ջրանցքը։ Ամերիկական «Անկօն» ռազմանաւով անցան պաշտօնական անձինք։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Պետերբուրգում բնակվող լեհերը մի կոչ են հրատարակել, որով առաջարկում են փոխել գերմանական անուն կրող «Պետերբուրգ» խօսքը և անուանել «Պետրօգրադ» (Պետրոսի քաղաք)։

◆ Պատուիրագրված է բացատրել զօրամասերում, որ օգոստոսի 8-ին սպասվող արևի խաւարումը չը պէտք է մեկնվի վատ մտքով, այլ որ նա հանդիսանում է բնութեան երևոյթից մէկը։

◆ Մայրաքաղաքի բոլոր ֆիրմաները պաշտօններից արձակել են իրանց աւստրիահպատակ և գերմանահպատակ ծառայողներին։

◆ Մայրաքաղաքի հրէաները յօգուտ վիրաւոր զօրականների հանգանակել են արդէն 48,000 ռուբլի։

◆ Անգլիական ընդհանուր զօրահրամանատարը առաջարկեց իռլանդացի կամաւորներին անմիջապէս զինվել։

◆ Հօլլանդիան վճռել է պատերազմ յայտարարել Գերմանիային, եթէ գերմանական զօրքերը խախտեն իր չէզոքութիւնը։

◆ Հռոմից մեկնել է աւստրիական դեսպանը։ Այդ նշան է համարվում Աւստրիայի և Իտալիայի յարաբերութիւնների խզման։

◆ Միացեալ Պետութիւնների ռազմի նաւատորմը Պանամայի ջրանցքով մեկնել է չինական ջրերը։

◆ Ֆրանց-Յօզէֆ կայսրը առաջարկեց ռումինական թագաւորին միանալ երբեակ զինակցութեանը, խոստանալով դրա փոխարէն տալ նրան Բեսարաբիան։ Ռումինական թագաւորը մերժեց։

◆ Կ. Պոլսում սով է։ Խուժանը ջարդում է հացատները։ Զօրքերը ուղարկվում են դէպի բուլգարական սահմանը։

◆ Կ. Պոլսի անգլիական դեսպանը պաշտօնապէս յայտնեց Բ. Դրան, որ եթէ Թիւրքիան յանդգնէ զէնք բարձրացնել երբեակ համաձայնութեան դէմ, Անգլիան ամբողջ Թիւրքիայում քար քարի վրա չի թողնի։

◆ Յայտնի բուլգար մարտիկ Սանդանսկին ազատութիւն է ստացել։

◆ Խարկովում և շրջակայքում շատ յայտնի բժիշկ հայազգի Սուրուչկին, ինչպէս հաղորդում են լրագիրները, աւստրիացիք գնդակահարել են սահմանում։

◆ Գերմանացիք զինում են Բէլգիայի բնակիչներին և ստիպում են նրանց կրակել բէլգիական զինուորների վրա, սպառնալով գնդակահարել նրանց, եթէ չը կրակեն։

◆ «Б. В.»-ին հեռագրում են Պարիզից, որ գերմանական իշխանութիւնները ձերբակալել են 50,000 ռուսների և մահվան սպառնալիքի տակ ստիպում են նրանց կատարել դաշտային աշխատանքներ։

◆ Արտասահմանում գտնվող պատգամաւորներ Աջէմեանի, Գօսցիցկիի և Դոբրօվօլսկիի մասին մինչև օրս տեղեկութիւն չէ ստացվել։

◆ Պետերբուրգի սոց.-դեմ. բանուորները պարսաւանք են յայտնում գերմանական դեմօկրատիային՝ ռուսներին ծաղր ու ծանակի ենթարկելու համար։ Բանաձևը ուղարկում են միջազգային սոցիալիստական բիւրօյին։

◆ «Ժողովուրդների կռւի» վայրը, որին մասնակցում են 2 միլիօն զինուոր, Մաաս գետից դէպի հիւսիս է, Նամիւր բերդի մօտ՝ Բէլգիայում։ Դաշնակից զօրքերին օգնութեան են հասել անգլիական զօրքերն Անտվերպէնից։ Արդէն երկու կողմից ընկել են տասնեակ հազարաւոր սպանված և վիրաւոր։ Թէև գերմանացիք կռւում են առիւծի նման, բայց դաշնակից զօրքերի յաղթութիւնը աներկբայ է։ Անասելի քաջագործութիւններ ցոյց է տալիս բէլգիական զօրքը։

◆ Պետերբուրգ վերադարձած նախկին շահ Մահմէդ Ալին վճռել է ընդմիշտ բնակվել Ռուսաստանում և ոտք չը դնել արտասահման։

◆ Չենստոխովի յայտնի պատմական վանքը, որ անհագին համբաւ ունի ուղղափառների մէջ, կողոպտվել ու քարուքանդ է եղել գերմանացիների ձեռքով։ Ս. Աստուածամօր պատկերի թանգագին ակնեղէնը յափշտակված է։ Ականատեսների ասելով, երբ գերմանացիք բռնաբարել են հէնց տաճարի մէջ այնտեղ ապաստանած աղջիկներին։

◆ Հաղորդում են, որ Պետ. Դումայի անդամ Պարչևսկիին և Կենիգսբէրգի ռուսաց հիւպատոսին գերմանացիք գնդակահարել են։

◆ «Ֆիգարոյի» թղթակիցը Պարիզ վերադառնալով յայտնել է, որ ըստ լուրերի ինքը Վիլհելմ կայսրը դէմ է եղել պատերազմին, որի վրա պնդել են նրա վեց որդիները, մանաւանդ կրօնպրինցը։ Օգտվելով այն հանգամանքից, որ Վիլհելմը մեկնել էր ջրերը բժշկվելու, կրօնպրինցը հրահանգ արձակեց պատերազմ յայտարարելու. և երբ Վիլհելմը վերադարձաւ, նա միայն ստիպված էր վաւերացնելու հրամանը։

◆ Սէվաստոպօլում շատ թիւրքեր խնդրում են ընդունել իրանց ռուսահպատակ։

◆ Յայտնի պրոֆ. Մաքսիմ Կովալէվսկին և Կարէևին գերել և ուղարկել են Ռիւգէն։

◆ Ֆրանց-Յօզէֆը համարեա մերձ ի մահ է։ Ծերունի միապետի վրա մանաւանդ խիստ ազդեց այն փաստը, որ երեան եկաւ սպանված Ֆէրդինանդի թղթերի մէջ։ Բանից դուրս է գալիս, որ Ֆրանց-Յօզէֆի որդու՝ Ռուդօլֆի սպանութեան մէջ ակտիվ դեր է խաղացել... Ֆրանց-Ֆէրդինանդը։

◆ Նիշում զինուորա-դաշտային դատարանին են յանձնվել մօտ 3000 աւստրիացի լրտեսներ, որոնց ձերբակալել են Սերբիայի զանազան տեղերում։

◆ Հաղորդում են, որ 4000 ալբան միացել են չերնոգորցիներին։

◆ Պետերբուրգում հաստատ տեղեկութիւններ են ստացվել, որ Բուլգարիան տենդային կերպով ակտիվ գործողութեան է պատրաստվում։

◆ Ստացված տեղեկութիւնների համաձայն, բէլգիացիները գերել են Ցաբէրնի դէպքերի տխրահռչակ հերոս Ֆորստներին։

◆ Մոսկվայի վաճառականութիւնը յօգուտ վիրաւորների նուիրեց վեց միլիօն ռուբլի։

◆ Բեռլինում սոցիալ-դեմոկրատներն ընդհարում են ունեցել զօրքերի հետ։ Կան սպանվածներ և վիրաւորներ։ Սոց. դեմ. պարագլուխները բանտ են դրված։

◆ Ֆրանսիայում բնակվող օտարազգիները—բէլգիացի, իտալացի, հօլլանդացի, հայ, ռումին, բալկանեան սլաւօն—կառավարութեանը իրանց ծառայութիւնն են առաջարկում և խնդրում են ընդունել իրանց կամաւորների թւում ֆրանսիական զօրքի մէջ։

◆ Պրոֆ. Բեխտերէվը ցանկութիւն է յայտնել մտնել Կարմիր Խաչի մէջ պատերազմի ժամանակ։

◆ Պարզվում է, որ պատերազմը յայտարարելուց մի ամիս առաջ գերմանական և աւստրիական սահմանամերձ փօստային բաժանմունքներում բացվում էին բոլոր այն նամակները, որոնք ուղարկվում էին Ռուսաստանից Գերմանիա և հակառակը։

◆ Պետերբուրգի բէլգիական դեսպանատունը հեռագիր էր ստացել դեռ օգոստոսի 1-ին, որ Լիէժի բոլոր բերդերը յետ են խլված, գերմանացիք արտաքսված են։

◆ Պետերբուրգից հեռագրում են, որ բօրսայի վերականգնումը վաղաժամ է ընդունված։

◆ Նոր-Նախիջևանի հայոց եկեղեցում կատարվեց մաղթանք ռուսաց զէնքի յաղթութեան համար։

ԵՌԱՊԵՏԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

Դիպլօմատիական իրազեկ շրջաններում ներկայումս վերջնականապէս պարզված են համարում եռապետեան դաշնակցութեան հետևեալ սխալները, որոնց պատճառով դաշնակցութեան գործը Անգլիայի հանդէպ գալով վերջնականապէս տանուլ տուած է համարվում։

Աւստրօ-ունգարական դիպլօմատիայի առաջին սխալը կայացել է այն կոյր հաւատի մէջ այն բանի վերաբերմամբ, որ ռուս կառավարութիւնը, ինչ էլ լինի, կը ստիպի Սերբիային կատարել աւստրօ-ունգարական ուլտիմատումի պահանջները։ Ինչպէս պարզվում է, Պետերբուրգի աւստրօ-ունգարական դեսպան Սապարին բոլոր ժամանակ յայտնել է իր կառավարութեանը, որ Աւստրիան անկասկած դիպլօմատիական յաղթանակ կը տանի։

Երկրորդ սխալը եղել է գերմանական դիպլօմատիայի սխալը, որը նոյնպէս կուրօրէն հաւատում էր, թէ Ռուսաստանը կը բաւարարի իր ուլտիմատումը՝ զօրահաւաքը դադարեցնելու մասին։ Պետերբուրգից հեռանալուց առաջ կոմս Պուրտալէ
խոստովանել է իր բարեկամներին, որ
րոպէին, երբ ինքը գտնվում էր Սազօնօ
մօտ՝ ռուսաց կառավարութիւնից վերջն
կան պատասխան ստանալու, նա հաստ
համոզված էր, որ ռուսական զօրքի զօր
հաւաքը դադարեցնելու գործը սկսվել
արդէն։

Վերջապէս, Գերմանիայի և Աւստրի
դիպլօմատներից և ոչ մէկը կասկած
տանում Իտալիայի «դաւաճանութեան» մ
սին և Անգլիայի ակտիւ քայլ անելու մ
սին։

ԴԱՂՍՏԱՆԻ ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՌԱԳԻՐ

«Русск. Инвалидъ»-ը հաղորդում է, որ Ն
րին Կայսերական Մեծութեան անուն
Դաղստանի շրջանի Պետրովսկ քաղա
Անձէդ-բէյ Տուտաշևը լեռնականնե
կողմից ուղարկել է հետևեալ հեռագիրը
տևեալ բովանդակութեամբ.

«Մեծ Թագաւոր! Մօտ յիսուն տարի ա
նից առաջ Ձեր ճշմարտահաւատ Պապ Կա
Ալէքսանդր II ազատելով մեզ աղէտաւոր
անհանգիստ կեանքից, որ առաջացել
Կովկասում տիրող ներքին երկպառակ
թիւնից ու կռւից, տուեց մեզ հանգի
Ռուսաստանի քաղաքացիներին հաւա
խաղաղ կեանք ռուսական դրօշակի պա
պանութեան տակ։ Մօտ կէս դար մենք
նախնեացս մեծից մինչև փոքրը օգտվ
ենք Միապետական այդ ողորմածութեա
ջերմ աղօթքներ վերառաքելով Բարձր
լին։ Այժմ, երբ օդից վառօդի հոտ է փչ
կարող ենք արդեօք սառնասիրտ ակա
նների դերում մնալ։ Ո՛չ. մենք սպասում
Մեր Թագաւոր Հօր կոչին, մենք պատր
ենք կրծքով դիմադրելու թշնամուն ի փ
Թագաւորի և ի պատիւ ռուսական զէնք
ցոյց կը տանք աշխարհին, որ Ռուսաստ
ուժեղ է տակաւին»։

Յիշեալ հեռագրի վրա Թագաւոր Կայ
Սեփական ձեռքով գրել է. «Սրտագին շն
հակալ եմ»։

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ

Ռուսական հրէաների օրգան «Нов. Во
անա ինչ է գրում ներկայ դրութեան մա

«Դրօշի տակ է կոչված Ռուսաստանի
բողջ ազգաբնակութիւնը, նրա մէջ ալ
բոլոր ցեղերն ու ժողովուրդները։ Պատ
կան այս մեծ րոպէին, որի նմանը չէ
պատմութեան մէջ, ռուսական հրէա
որպէս մի մարդ կը կանգնեն իր
հայրենիքի պաշտպանութեան։ Մեզա
իւրաքանչիւրը կը կատարէ իր պար
հայրենիքի առաջ,—կը կատարէ մինչև վ
ջը,—համոզված և արիաբար, իր վրա վ
ված պարտականութեան լիակատար գիտ
ցութեամբ։

«Մենք Ռուսաստանում ենք ծնվել
մեծացել, այստեղ է թաղված մեր նախն
ների աճիւնը։ Անքակտելի կապերով մ
ռուսական հրէաներս, կապված ենք Ռ
սաստանի հետ... Այս պատմական րոպէ
երբ մեր հայրենիքին օտար արշաւան
սպառնում, երբ կոպիտ ոյժը ծառաց
մարդկութեան մեծագոյն իդէալների
ռուսական հրէութիւնը արիաբար պա
բազմի դաշտ դուրս կը գայ և կը կատ
իր սրբազան պարտքը»։

*

Ներկայ դրութեան մասին առաւել խ
և զայրացկոտ տօնով է խօսում «Кіевлян
թերթը.

«Թող այն արիւնը, որ թափվելու է, ըն
ձեր և ձեր երեխաների վզին։ Թող նա թ
վի այն Թագաւորի գլխին, որը որպէս
մանակակից Ներոն՝ ամբողջ աշխարհը
րեց նրա համար, որ այդ սարսափելի
դեհի մէջ նորոգի իր դինաստիայի խա
ցած ծաղիկները։ Իսկ մենք, որ համբ
ենք մինչև վերջը, մենք, որ ներել են
անգամ, Քրիստոսի պատուիրանի համա
մենք, որ մեզ հասցրել ենք ծայրայեղութ
մենք ամենքս մինչև վերջին մարդ
խմբվենք Գահի շուրջը և ռուս երկրի
նակալի խօսքով կը տապալենք յանդ
թշնամուն»։

*

«Нов. Вр.»-ն իր առաջնորդող յօդ
ծում ասում է, որ գարշելի ոտնահար
այն միջազգային պայմանագրերի, ո
ստորագրված են գերմանական կառա
րութեան ձեռքով, առիթ է տալիս
յիշելու միջնադարեան անգլիական «H
humani gereris» խրատունքի հասկաց
թիւնը։ Մարդկային ցեղի թշնամին
գերմանացիք՝ իրանց դնում են օ
քից դուրս, խախտելով իրաւունքի
րական հասկացողութիւնները, ոտնչ
նելով եւրոպական կուլտուրայի եզակ
թիւնը։ Հիւսիսային և Բալտիկ ծ
րը հինգ տարի շարունակ լի են
զացող ականներով, որ իւրաքանչիւր
գնացքի կորուստ են սպառնում, հ
ռակ այն պայմանագրի, որ ստորագր
ինքը Գերմանիան 1907 թւին։ «Կարելի
ասում է լրագիրը,—ներել առանձին ա
տի խելառ ոճիրը, բայց չի կարելի
տալ այն բարբարոսութիւնը, որ գործվ
կենտրոնական իշխանութեան կանխամ
ված մտադրութեամբ։ Երբ համնէ վ
խնդրութեան ժամը գերմանական պե
թեան հետ, պէտք է գործադրվի «ակն
ական և ատամի ընդ ատաման» պայմ
րանքը»։

«Петер. Курь.»-ը նոյնպէս մի յօդուածով մատնանշում է պրուսացիների՝ Զենստոխովում գործած անլուր գազանութիւնների դէպքերը, ասելով, որ բռնաբարվել են քառասուն միանձնուհիներ։ Զենստոխովում հեծեալ պահակ զինուորները շրջագայելով քաղաքում, գնդակահարում՝ էին բոլոր կասկածելի հանդիպողներին։ Մի պրուսացի լէյտենանտ բռունցքի հարուածով ուշաթափ արեց մի լեհուհի կալուածատիրուհու, յետոյ ոտքով ջարդեց նրա դէմքը, կոտրելով ծնօտը։ Գիշերը լեհ կամաւորները ոչնչացրին պրուսական մի զօրախումբ, որին գերմանական զօրքերը՝ ազգաբնակութեանը զինաթափ անելուց յետոյ՝ պատասխանեցին, սրի քաշելով բոլոր տղամարդկանց։ Ծերունիները, կանայք և երեխաները փախել են անտառները։ Տղամարդիկ այրել են հացի և կերի բոլոր պաշարները, զինվել են և կազմել են կամաւորների խմբակներ։ Քաղաքը և գործարանները դատարկվել են։

*

«Веч. Вр.»-ն, որ ուշադրութիւն է դարձնում Թիւրքիայի քաղաքականութեանը, գտնում է, որ մեր դիպլօմատիայի ձեռքի տակ եղած տեղեկութիւնների համաձայն, Բ. Դուռը երկդիմի խաղ է խաղում։ Անգլիական կարծիքը յուզված է Թիւրքիայի վարմունքից։ Էդուարդ Գրէյը ամենակտրուկ կերպով յայտնեց թիւրքաց դեսպանին, որ Թիւրքիայի գործողութիւնները ներհակ են խոստացված չէզոքութեանը։ Թէև Պետերբուրգի թիւրքաց դեսպանը հաւատացնում է օսմանեան կառավարութեան խաղաղասիրութեան մասին, սակայն Կ. Պօլսում աճում է գերմանասիրութիւնը։ Թիւրքիայի վերաբերմամբ դրութիւնը տեղեակ շրջաններում համարվում է վերին աստիճանի լուրջ։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՌԱԶՄԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Գոլորշին և էլեքտրականութիւնը հիմնովին կերպարանափոխել են զինուորական արուեստը և ռազմագիտութիւնը իսկական գիտութեան աստիճանի են հասցրել։ Այդ պատճառով ժամանակակից պատերազմի մեխանիզմը շատ բարդ կերպարանք է առել, այնպէս որ գործին անծանօթ մարդը շատ դժուարութեամբ է կարողանում այդ մեխանիզմի և պատերազմական գործողութիւնների առանձին-առանձին մոմենտների մասին գաղափար կազմել։

Այդ խնդիրը մանաւանդ դժուար է պատերազմի սկզբնական շրջանում, երբ պատերազմական բեմից ստացված տեղեկութիւնները չափազանց հակասական են և սակաւ։

Որպէս զի մարդ կարողանայ քիչ թէ շատ գաղափար կազմել պատերազմի ընթացքի մասին ստացված տեղեկութիւնների քաոսի վերաբերմամբ, որոնցից մեծ մասը խմբագրվում են փողոցային մամուլի գրասենեակներում, իսկ միւս մասն էլ դիտաւորեալ կերպով թշնամին է տարածում իր իսկական գործողութիւնները քօղարկելու համար, անհրաժեշտ է, որ մարդ ճշգրիտ կերպով իրան հաշիւ տայ առաջին օրերի պատերազմական գործողութիւնների մասին։

Ի հարկէ, չը պէտք է մոռանալ, որ իւրաքանչիւր պատերազմ ունի իր տեղական առանձնայատկութիւնները, և թէ պատահականութիւնները կարող են յեղաշրջել բոլոր ծրագիրները։ Շատ ծրագիրներ էլ փորձերի վրա հիմնված չը լինելով՝ տեսական բնաւորութիւն են կրում։

Ժամանակակից ռազմագիտութեան ամենամեծ դժուարութիւնը կայանում է նրանում, որ շատ հեշտ կերպով հնարաւոր է զինուորական ոյժերը խաղաղ դրութիւնից վերածել պատերազմական դրութեան։ Խաղաղ ժամանակ զօրքերը սովորաբար ցրված են ամբողջ երկրում և այն էլ ոչ բովանդակ քանակութեամբ։ Նրանց քանակութիւնը հարկաւոր է լրացնել և փոխադրել պատերազմական թատերաբեմը։

Այս բոլորը շատ հեշտ կերպով կարելի է գլուխ հանել, եթէ թշնամին միջոց տար այդ բանը խաղաղ ժամանակը կատարելու։ Սակայն բանը նրանումն է, որ զօրահաւաքութեանը ձեռնարկելուն պէս թշնամին աճապարում է պատերազմ յայտարարել, որով հնարաւորութիւն չէ տալիս պատերազմի համար գոնէ սկզբում որոշեալ չափով պատրաստ լինելու։

Պատերազմի ժամանակ իւրաքանչիւր պետութիւն թշնամուց առաջ ընկնելու և պատերազմական գործողութիւնների նախաձեռնութիւնը իր ձեռքում պահելու համար աշխատում է աւելի շուտ պատերազմի պատրաստվել։

Այս նպատակով պատերազմից առաջ դիւանագիտութիւնը աշխատում է ժամանակ վաստակել, որպէս զի զօրահաւաքի և զօրքերը կենտրոնացնելու գործողութիւնները նախ քան թշնամու իմանալն աւարտած լինեն։ Օրինակ, հաստատվում է, որ Աւստրիայի և Սերբիայի դիւանագիտական յարաբերութիւնները խզվելուց յետոյ, յուլիսի 12-ից սկսած, գերմանական զինուորական շտաբը Ֆրանսիայի վրա յարձակվելու համար ծածուկ պատրաստութիւններ էր տեսնում և խորին գաղտնապահութեամբ Մեցի մօտ կենտրոնացրել էր մի քանի կորպուս։ Այն ինչ հէնց այդ ժամանակ գերմանական դեսպան ֆօն-Շէնը ամեն կերպ աշխատում էր հաւատացնել Պարիզի կաբինէտին, որ իր միապետը լցված է խաղաղասիրական ձգտումներով. իսկ ինքը՝ Վիլհէլմ կայսրը այդ հաւաստիացումներին ոյժ տալու համար զբօսնում էր իր սեփական զբօսանաւով նորվեգիական ջրերում։

Զօրքի կենտրոնացման շրջանը պէտք է սահմանից բաւականին հեռու լինի։ Քանի որ զօրքերը գտնվում են վագօնների մէջ կամ նրանց միջից դուրս չեն գալիս, նրանք զինուորական ոյժ չեն համարվում. միմիայն վագօններից դուրս գալուց և որոշեալ զօրամասերում նրանց տեղաւորելուց յետոյ է զօրքը պատերազմի, կռւի և արշաւանքի համար պիտանի համարվում։

Այսպիսով՝ առաջին օրերի ռազմագիտական ամենագլխաւոր խնդիրը կայանում է ապահով կերպով զօրքը դասաւորելու մէջ։

Զօրքի՝ սահմանի մօտի կենտրոնական ժողովատեղից հեռանալու հետ միասին այդ շրջանի առաջ մի շարք բաւականին ուժեղ ամրութիւններ են կառուցվում, որպէս զի թշնամու առաջխաղալու առաջը կարողանան առնել։ Երբեմն էլ զօրքի կենտրոնացման համար ընտրում են այնպիսի տեղեր, որոնք հէնց իրանցից բնական ամրութիւններ են ներկայացնում (օրինակ՝ գետերը, լեռները, ճահիճները և անտառները)։

Բացի դրանից՝ զօրքի կենտրոնացած շրջանի առաջ դիրքեր են գրաւում մի քանի կորպուս զօրքեր, որոնք իրանցից կենդանի ամրութիւններ են ներկայացնում և կազմում են զօրքի ռազմական առաջապահ մասը։

Վերջապէս հէնց սահմանին մօտիկ սովորաբար տեղաւորվում են հեծելազօրամասերը, որոնք կռւի առաջին օրերում նշանաւոր և դրական դեր են խաղում։

Այսպիսով զօրքի կենտրոնացած շրջանը թշնամու հետաքրքիր հայեացքներից և նրա որոգայթներից պաշտպանվում է եռակի գօտիներով. 1) սահմանապահ հեծելազօրով, 2) պատերազմական թատերաբեմի առաջապահ գնդերով և 3) արհեստական և բնական ամրութիւնների շարքերով։

Վերջին գօտին, ի հարկէ, անշարժ է, իսկ առաջին երկուսը պաշտպանութեան շարժական գծերը։ Մանաւանդ զօրքի կենտրոնի թևերն առանձնապէս պէտք է ամրացված լինեն, որպէս զի թշնամին չը կարողանայ զօրքը շրջապատել։

Որքան որ զօրքի կենտրոնացման և զօրաժողովի մէջ հակառակորդն առաւելութիւն ցոյց տայ, այնքան յամառ կերպով պիտի աշխատել նրա առաջխաղալու առաջն առնել և դրանով ժամանակ վաստակել։

Պատերազմի հէնց առաջին օրերից այս պարտականութիւնը դրվում է կավալերիայի վրա, որ ամեն ժամանակ և ամենուրեք միշտ ռազմական կատարեալ պատրաստութեան մէջ է գտնվում։

Պատերազմ յայտարարելուց յետոյ հեծելազօրն անմիջապէս արշաւանքի է դուրս գալիս, ներս է խուժում թշնամու երկիրը և աշխատում է ոչնչացնել երկաթուղու և խճուղու վրա գտնված կամուրջները, այլ և այլ շինութիւնները, քանդում է ռէլսերը, հեռագրաթելը, հեռախօսը, այրում է ուտեստի պաշարի և պատերազմական մթերքների շտեմարանները և այլն։

Այս գործողութիւնների նպատակն այն է, որ սահմանակից շրջաններում զօրահաւաքի գործողութիւնը դժուարացնէ, ազգաբնակութեան վրա սարսափ տարածէ և թշնամու առաջ խաղալու առաջն առ ժամանակ առնէ։

Բացի դրանից՝ ճանապարհին դրանց միջոցով տեղեկութիւններ են ժողովում թշնամու դիտաւորութիւնների մասին։

Որովհետև երկու կողմի հեծելազօրն էլ միևնոյն բանին է ձգտում, այդ պատճառով էլ պատերազմը սովորաբար ըսկսվում է հեծելազօրամասերի ընդհարումներով։

Ներկայ պատերազմում սկզբնական այս շրջանն առանձնապէս շատ հետաքրքրական է, որովհետև գերմանական հեծելազօրը Վիլհէլմ կայսրի սիրեցեալ զաւակն է համարվում։

Հեղինակաւոր ռազմագէտների կարծիքին հակառակ՝ գերմանական զօրքի բարձրագոյն հրամանատարը համոզված է, որ հեծելազօրը ռազմի դաշտում դեռ ևս կարող է աչքի ընկնող դեր կատարել։ Այդ պատճառով գերմանացիք իրանց հեծելազօրին նոյն իսկ վարժեցնում են հետևակ զօրքի հետ կռւել։

Վիլհէլմ II-ի թագաւորութեան օրով կազմակերպվել են 20 նոր հեծելազօրային գնդեր. գերմանական հեծելազօրը կարդարացնէ իր վրա դրված յոյսերը՝ թէ ոչ, դա ցոյց կը տայ մօտիկ ապագան։ Առ այժմ ստացված տեղեկութիւններից երևում է, որ գերմանական դրագուններն ու ուլաններն Արևելեան Պրուսիայում Մլաւայի և Վերժբոլովի մօտերը մեր հեծելազօրից ջարդ են կրել, որ և ներս է խուժել թշնամու հողը։

Եթէ աջողութիւնն ամեն տեղ մեր կողմը լինի, այն ժամանակ մենք շուտով թշնամու մասին նշանաւոր տեղեկութիւններ կը ստանանք։

Ժամանակակից ռազմագիտական պայմաններում հեծելազօրային գնդերի ընդհարումը սովորաբար կարող է միայն մի քանի օր տևել։

Թշնամու երկիրը ներս խուժած հեծելազօրը հէնց որ ճանապարհին հանդիպում է հակառակորդի հետևակ զօրքերի առաջապահ մասերին, իսկոյն սկսում է յետ նահանջել՝ նրա հետ կռիւ է բռնվում միայն նպաստաւոր դէպքերում, որովհետև այրուձին չափազանց թանգ արժէք ունեցող զինուորական ոյժ է ներկայացնում, և այդ ոյժը թշնամու առաջ խաղալուն դէմ դնելու համար չէ կարելի շռայլաբար գործադրել։ Այդ պատճառով՝ այրուձին սովորաբար յետ նահանջելու ժամանակ աշխատում է թշնամուն ստիպել, որ նա մեծ տարածութեան վրա ցրվի, որից յետոյ նա հեռանում է։

Առաջապահ հեծելազօրի յետ նահանջելուց յետոյ սկսվում է պատերազմական գործողութիւնների երկրորդ շրջանը. կռւող կողմերից այն, որի զօրքի կենտրոնացումը դանդաղ կերպով է առաջ գնում, այս շրջանի կռւով աշխատում է զօրքերը կենտրոնացնելու համար ժամանակ վաստակել և թշնամուն թոյլ չը տալ, որ յարձակվի գլխաւոր ոյժերի վրա։

Պատերազմի այս շրջանը թէպէտ ըստ տեսականի երկրորդական նշանակութիւն ունի, բայց իսկապէս պատերազմի յետագայ անցքերի համար շատ էական նշանակութիւն ունի։

Եթէ զօրքի կենտրոնացած շրջանը սահմանից քիչ թէ շատ յետ է լինում, այն ժամանակ նրա առաջ սովորաբար տեղաւորում են նշանաւոր ոյժեր (օրինակ՝ Ֆրանսիայում մէկ կորպուս և երկու հեծելազօրային դիվիզիա)։

Գլխաւոր ոյժերի գործունէութեան աջողութեան համար շատ մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ թշնամին չը կարողանայ ոչնչացնել պատերազմական թատերաբեմի առաջապահ զօրամասերը և դրանց՝ մինչև վճռական ճակատամարտը անվտանգ մնալը։ Այսպիսով պատերազմական թատերաբեմի առաջապահ զօրամասերը պէտք է յետ նահանջեն, մինչև որ գլխաւոր զօրաբանակը արշաւանքի դիմէ։

Յետ նահանջման մեծ վարպետ Կուտուզովը 1805 և 1812 թ. այնպէս էր նահանջում, որ թշնամին չէր կարողանում հարուածել նրա թիկնապահ զօրքը և խուսափում էր նրա հետ վճռական ճակատամարտերի մէջ մտնելուց։ Նա թիկնապահ զօրքին թոյլ էր տալիս կռւի բռնվել միայն այն ժամանակ, երբ հետապնդող թշնամին շատ նեղն էր լծում նրան։

Այդպիսով մեր XIX դարի ամենանշանաւոր զօրավարը մեզ մի աւանդ է թողել՝ յետ նահանջել առանց կռւի։

Այդ պատճառով առաջապահ պատերազմական բեմից յետ նահանջելու ժամանակ զօրքերը կանգ են առնում միայն թշնամու պատահական թուլութեան դէպքում, բնական ամուր դիրքերի հանդիպելիս և ուրիշ բացառիկ դէպքերում։ Ի հարկէ ամրութիւնները առաջապահ պատերազմական բեմում զօրքերը մինչև վերջին հնարաւորութիւնը պաշտպանում են, ապա թէ ոչ նրանք չեն կարող իրանց կոչմանը՝ թշնամու առաջխաղացութեան առաջն առնելուն՝ ծառայել։

Երբ առաջխաղացող թշնամին տիրապետում է պատերազմական բեմի առաջապահ մասին, այն ժամանակ տեղի է ունենում երրորդ՝ վճռական շրջանը՝ գլխաւոր ոյժերի ընդհարումը։

Կռւող զօրքերի որակութեան հաւասարութեան դէպքում՝ այս ընդհարման հետևանքը կախված է զօրավարների հմտութիւնից և քանակութեան գերազանցութիւնից։

Այդ պատճառով ռազմագիտութեան գլխաւոր պահանջը կայանում է նրանում, որ պատերազմական գլխաւոր թատերաբեմում թշնամուն վճռողական հարուած տալու համար որքան կարելի է շատ և փորձված զօրքեր կենտրոնացվեն։ Նոյնիսկ եթէ կռիւը զանազան կէտերում է մղվում, անհրաժեշտ է երկրորդական պատերազմական բեմերում աւելի քիչ քանակութեամբ զօրքեր թողնել։

Երկրորդական կէտերում կրած պարտութիւնները և յաղթութիւնները այնքան էլ մեծ նշանակութիւն չունեն և պատերազմական գլխաւոր թատերաբեմում տարած յաղթութիւնից յետոյ երկրորդական կռիւներում կորցրած դիրքերը յետ են խլվում առանց դժուարութեան։

Ով ցանկանում է ամեն տեղ ուժեղ լինել, պատերազմական գլխաւոր թատերաբեմում ամենից թոյլն է լինում։

Նապոլէոնը 1813 թւին յաղթվեց միայն այն պատճառով, որ նրա զօրքերը ցրված էին ամբողջ Գերմանիայում և գլխաւոր կէտում ունէր միայն 171,000 զօրք, այն ինչ հակառակորդներն ունէին 302,000 զօրք։

Հռչակաւոր Կօրսիկացու այս սխալը նրա համար օրհասական նշանակութիւն ունեցաւ, և նա Լայպցիգի կռւում յաղթութիւնը տանուլ տուեց։

1805 թ. աւստրիական 95,000 զօրքերը էրցհերցօգ Կարլոսի առաջնորդութեամբ ջարդեցին Մասսենայի 50,000 զօրքը, այն ինչ նոյն ժամանակում կռւի հիւսիսային թատերաբեմում Նապոլէոնը 200,000 զօրքով ջարդեց աւստրիական 120,000 զօրքը, որից յետոյ Աւստրիան ստիպված եղաւ հաշտութիւն խնդրել։

1866 թ. չը նայելով աւստրիական զօրքերի իտալական զօրքերի վրա Կուստոցցայի մօտ տարած յաղթութեանը, Կէնիգգրէցի գլխաւոր ճակատամարտերից յետոյ Աւստրիան ստիպված եղաւ հրաժարվել Իտալիայից։ («Р.С.»)

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ VII ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԹԱՑԱՒԱՐՏՆԵՐԻ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ

I

Վերոյիշեալ դպրոցի յարգոյ հոգաբարձութիւնը ներկայ տարվայ զատկական տօներին կազմակերպեց յիշեալ էկսկուրսիան՝ նախօրօք իր նախագահ առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի միջնորդութեամբ ստանալով առանձին վագօն էժանացրած գնով։

Էկսկուրսիայի ծրագիրը շատ կրթիչ և հետաքրքրական էր ամեն կողմով։ Բացի աշակերտուհիներից՝ մասնակցում էին տեսուչ պ. Ստ. Մալխասեանցը, որի ղեկավարութեամբ պիտի կատարվէր ամեն բան, աւագ վերակացուհի տիկ. Դաւթեան, օր. Աղայեան, ուսուցիչ պ. Մելիտոն Յարութիւնեան, Հ. Մուսայէլեան, բժ. Բ. Աղասարեան։ Կային և մի քանի գիմնազիաւարտ հայ օրիորդներ, մէկ բժ. ուսանողուհի. ընդամենը էկսկուրսիայի խումբը բաղկացած էր 44 հոգուց։

Ապրիլի 7-ին, մօտաւորապէս ժամը 2-ին, խումբը առանձին վագօնում տեղաւորված ճանապարհվեց դէպի Երևան։ Բոլոր աշակերտուհիների մօտիկ ազգականները եկել էին կայարան ուղեկցելու։ Եղանակը անձրևային էր։ Ենթադրվում էր, որ մի քանիսը անաջող եղանակի պատճառով չէին ցանկանայ մասնակցել էկսկուրսիային։ Բայց հակառակ սպասածին՝ բոլորն էլ եկել էին կայարան, որովհետև բոլորի ցանկութիւնն էլ մեծ էր՝ տեսնել այն վայրերը, որոնք վաղօրօք ծրագրված էին խմբի կողմից, այն է՝ Երևան, Էջմիածին, Զւարթնոց եկեղեցի, Օշական, Աշտարակ, իսկ վերադարձին Անի։ Այդ բոլոր վայրերը այցելելու համար տրամադրված էր մէկ շաբաթ, ապրիլի 7-ից մինչև 13-ը, որպէսզի միւս օրը դպրոցական պարապմունքներին կարողանան յաճախել։

Ճանապարհին բաւական ցուրտ էր, սակայն եղանակի անբարեյաջողութիւնը չազդեց էկսկուրսանտների տրամադրութեան վրա. երբ տեղաւորվեցինք առանձին վագօնում, աշակերտուհիները սկսեցին ուրախ արտայայտութիւններ անել, երգել, ծիծաղել և այլն։ Ղարաքիլիսայից եղանակը աւելի ցրտեց և սկսեց թեթև կերպով ձիւն տեղալ, որը տևեց մինչև Ալէքսանդրօպօլ։

Ապրիլի 8-ին, առաւօտեան ժամը 8-ին, հասանք Ուլուխանլու կայարանը, ուր Ջուլֆա գնացող գնացքի մեր վագօնից տեղափոխվեցինք մի ուրիշ առանձին վագօն՝ Երևան տանող գնացքի մէջ։ Իջնելով վերջին կայարանում, որը բաւական հեռու է քաղաքից, մենք հանդիպեցինք Երևանի Գայիանեան դպրոցի հոգաբարձու պ. Գ. Ահարոնեանցին, որը եկել էր մեզ հրաւիրելու յիշեալ դպրոցը, ուր պիտի իջեւանէինք գիշերելու։ Եղանակը թէև անձրևային էր, բայց յիշեալ դպրոցի մի քանի վարժուհիներ և աշակերտուհիներ կառքով եկել էին դիմաւորելու և հրաւիրելու։ Հասանք Երևան և իջեւանեցինք դպրոցի շինութեան մէջ, ուր պատրաստված էին թէյ և զանազան ուտելիքներ, ձու, պանիր և այլն։

Այտեղ սպասում է տեսուչ պ. Զուրբեանը, վարժուհիներ, ուսուցիչներ և աշակերտուհիներ, որոնք մեզ ընդունեցին մի առանձին ուրախութեամբ և ցնծութեամբ։

Թէյից յետոյ պ. պ. Զուրբեանի և Ահարոնեանի առաջնորդութեամբ այցելեցինք քաղաքի նշանաւոր տեղերը, մզկիթները, ամառվայ և ձմեռվայ համար շինած նրանց բակում գտնվող բազմաթիւ մէքտաբները—դպրոց—ուր գտնվում էին աշակերտները յատակի վրա նստոտած։ Աշակերտուհիները մի առանձին հետաքրքրութեամբ մտնում էին այդ խուցերը, դիտում դասատուի այդ ձևերը, գտնելով ամեն ինչ հակամանկավարժական ու հակաառողջապահական։ Մեր աշակերտները բացագանչում էին. «Ինչքան մենք հայերս առաջ ենք գնացել դպրոցական գործում մեր հարևան մահմեդականներից»։

Այդտեղից գնացինք Սարդարի այգին, որը գտնվում էր Զանգուի աջ ափին և որը այժմ արքունական է համարվում, որովհետև թէ սարդարի ապարանքը և թէ այգին յարքունիս են գրաւված։ Սարդարի ապարանքը ներկայումս աւերակ է, զուրկ որևիցէ հրակողութիւնից, և նրան կից գտնվում է Շուստովի կօնեակի ահագին գործարանը, որը դժբաղդաբար չը կարողացանք տեսնել, որովհետև տօների պատճառով փակ էր։ Վերոյիշեալ այգին այժմ ծառայում է ի միջի այլոց իբրև օրինակելի տնտեսական հիմնարկութիւն։

Մօտաւորապէս ժամը 12-ին ներկայացանք փոխ-թեմակալ Խորէն եպ. Մուրադբէկեանին, որը մեզ շատ սիրալիր կերպով ընդունեց։ Այդ օրը սրբազանը ճաշ էր պատրաստել առաջնորդարանի պատշգամբում, որտեղից սքանչելի տեսարան է բացվում. ներքև Զանգի գետը, Երևան քաղաքի շատ մասերը, Մասիս սարը և Արարատեան ընդարձակ դաշտի բաւականին մեծ մասը։ Կարելի է ասել, որ առաջնորդարանը քաղաքի ամենասքանչելի վայրերից մէկումն է գտնվում։

Սրբազանի ընդունելութիւնը աշակերտուհիներին և նրանց ուղեկցող անձանց՝ շատ սիրալիր էր, հիւրասիրութիւնը առատօրէն։

Ճաշից յետոյ աշակերտուհիներին ցոյց տրվեց Զանգի գետի ափին մի հրաշալի վայր ևս, որը գտնվում էր յիշեալ գետի վերի կողմերում, որը կոչվում է Խում-Բուլակ աղբիւրներ։ Քաղաքից երևում էին Քանաքեռը, Նորքը, որոնք գտնվում են աւելի բարձր տեղերում։ Քաղաքի բուլվարում գտնվում է Աբովեանի արձանը դեռ ոչ բոլորովին աւարտած։

Շնորհիւ Մուրադբէկեան եպ.-ի՝ թեմում հայ դպրոցների թիւը հասնում է 200-ի։ Նա արդէն թեմական դպրոցի 75-ամեակի առիթով դիմել է ունեւոր անձանց նիւթականապէս ապահովելու յիշեալ դպրոցը։

Քաղաքում կան բաւականաչափ ծխական դպրոցներ, իսկ Գայիանեան դպրոցն ունի վեցամեայ դասընթացք, բայց բուռն ցանկութիւն կայ վերածել միջնակարգ դպրոցի, նման Թիֆլիսի Յովնանեան և Գայիանեան դպրոցներին։ Յոյս է յայտնվում, որ տիկին Քանանեանը իր ցանկութիւնը կը կատարէ՝ իր հօր նման՝ յիշեալ դպրոցը միջնակարգ դարձնելով, շինելով թէ յարմար շինութիւն և թէ նիւթականապէս ապահովելով։

Երևանցիք հաւատացած են, որ յիշեալ տիկինը կը հանդիսանայ մի մեծ բարերարուհի Երևանի թեմի համար, մանաւանդ Երևանի, ուր հայ օրիորդների համար մի միջնակարգ դպրոցի կարիքը շատ մեծ է։

Ապրիլի 9-ի առաւօտեան ճանապարհ ընկանք հանրակառքով դէպի Էջմիածին այն մտադրութեամբ, որ ճանապարհին տեսնենք Զւարթնոցը, բայց անձրևը մեզ արգելեց իրագործել մեր մտադրութիւնը. միայն աշակերտուհիների մի մասը երկու ուսուցիչների հետ մեզանից երկու ժամ շուտ էին ճանապարհվել, որոնք և կարողացան տեսնել յիշեալ աւերակները և ծանօթանալ նրանց հետ բազմեռանդ Խաչիկ վարդապետի մանրամասն բացատրութեան շնորհիւ։ Դրա մասին մանրամասն կը խօսենք յետոյ։

Հասանք Էջմիածին և իջեւանեցինք Հայրիկապատ հիւրանոցում, ուր մեզ ընդունեց հիւրընկալ վարդապետը, յատկացնելով հարկաւոր սենեակներ թէ աղջկանց և թէ նրանց ուղեկցող տղամարդկանց համար։

Այդ օրը մենք այցելեցինք ճեմարանը, մատենադարանը, ուր սրբազան տեղակալը ցոյց տուեց՝ ինչ որ հետաքրքրական էր և հազուագիւտ, փղոսկրեայ աւետարանը և այլ ձեռագիրներ, որոնք զետեղված էին բազմաթիւ դարակներում և պահվում էին մի առանձին հոգածութեամբ։ Տեսանք մատենադարանի ընդարձակ դահլիճում երևելի նկարներ՝ Այվազովսկիի, Բաշինջաղեանի։ Ինչպէս յայտնի է, այդ շինութիւնը կառուցված է Դաւիթ-խան Աւան-Իւզբաշեանի հաշւով։

Գրադարանապետը տեղակալ Յուսիկ արքեպիսկոպոսն է, որը բնակվում է շինութեան վերի յարկում։

Բժ. Բ. Աղասարեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԸ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐՈՒՄ

I

Պեատիգորսկ, 24 յուլիսի

«Մշակի» այս տարվայ № 116-ում մի յօդուած էի գրել Կովկասի հանքային ջրերի մասին։ Չէի կարծում, որ այս տարի էլ ինձ կը վիճակվէր գալ ջրերը, բայց դարձեալ ստիպված եղայ գալ։ Եթէ տիրող պակասութիւնները չը լինեն, հանքային ջրերը, այսինքն այն կուրօրտները (Պեատիգորսկ, Կիսլօվօդսկ, Եսսենտուկի և Ժելեզնովօդսկի), ուր տասնեակ հազար մարդիկ են գալիս ամեն տարի բժշկվելու, կատարեալ դրախտ կը ներկայացնեն։ Նրանց դիրքը, բնութեամբ հարուստ ու սքանչելի տեսարաններն ու շրջակաները, հարուստ, առողջարար ու բուժիչ ջրերը միանգամայն զմայլելի են։ Կովկասեան ձիւնածածկ լեռնաշղթան—Էլբրուսով—իր վեհափառ բարձրութեամբ՝ Պեատիգորսկից գտնվում է մի քանի տասնեակ վերստ հեռու դէպի հարաւ։ Նա՝ Էլբրուսը պարզ եղանակին, երբ երկինքն ամպամած չէ, շատ լաւ երևում է այստեղից և իր գեղեցկութեամբ մարդուս անհուն ուրախութիւն պատճառում։

Թէև այս տարի սկիզբներում ասում էին, թէ հանքային ջրեր եկողներ քիչ են, բայց և այնպէս վերջերս լցվեցին, և անցեալ տարուց շատացել է եկողների թիւը։ Նախկին թղթակցութեանս մէջ ասել էի, հիմա էլ կրկնում եմ, որ այստեղ եկողներից շատերը գալիս են ոչ թէ բժշկվելու, այլ զուարճանալու։ Եւ, արդարև, այսպիսիների համար զուարճութիւններ անչափ շատ կան։ Զանազան ներկայացումներ, օպերաներ, կօնցերտներ — հռչակաւոր երգիչների ու երգչուհիների—ամեն օր. էկսկուրսիաներ դէպի Բեշտաու լեռը, կուրօրտների շրջականները, Էլբրուսը, Սև ծովի ափերը, Ռազմավիրական, Ռազմասվանէթական և այլ ճանապարհները. հարուստ ու ճոխ հիւրանոցները. մի խօսքով՝ որքան կուզէք զուարճութիւններ, միայն թէ փող շատ ունենաք, որ անհաշիւ ծախսէք։ Դուրս էք գալիս կուրորտների հռչակաւոր պարկերը և Պեատիգորսկի «ЦВѢТНИКЪ»-ը և տեսնում էք հազարաւոր ճոխ, հարուստ հագնված տիկնայք և օրիորդներ, որոնք կարծես իրանց հարուստ վերջին տարազով, հագուստեղէնով աշխատում են մրցել իրար հետ։

Վերջին տարազով հագնված կանայք աշխատում են որքան կարելի է առել բանալ ոտները վերևի հագուստի տակից։ Վերջերս մարդկանց համար էլ մի նոր տարազ է դուրս եկել. նրանք էլ, կանանց հակառակ, վզերն են բաց թողնում «à la Բայրօն»... Բայց, ասում եմ, այս բոլորը հարուստների համար, որոնք միջոց ունեն սեփական խոհանոց ունենալ, կամ առաջնակարգ հիւրանոցներում և ռեստորաններում կերակրվել. իսկ չունևորները կամ միջակ դասակարգը թող բաւականանան նրանով, ինչ որ կարող են ձեռք բերել ու ստամոքսը փչացնել. ամեն մի տնւոր այստեղ իր տանը ճաշարան է բանում, աշխատանքի աղբիւր դարձնելով այդ. բայց ինչ ճաշ. Աստուած հեռու տանի։ Նոյն իսկ այնպիսի մի ընկերութիւն, որպիսին Ժելեզնովոդսկի Բժշկական Ընկերութիւնն է, նա էլ ունի ճաշարան, որից բոլորն էլ գանգատվում են՝ վատ կերակրելու պատճառով։ Ամեն տեղ աշխատանքն է գլխաւոր տեղը բռնում. ուրիշ ոչինչ։

Նախկին յօդուածումս ասել էի, որ այստեղ կատարեալ «պլոկաց» է. ամեն ոք—թէ հանքային ջրերի վարչութիւն, թէ քաղաքային վարչութիւն, թէ տնատէրեր և այլն—բոլորն էլ աշխատում են որքան կարելի է շատ փող վերցնել կուրորտ եկողներից։ Մինչև այս տարի այսպէս ասած СЕЗОННЫЙ билетъ-ի գինը 5 ր. էր. այժմ դարձրել են 7 ր., կարծէք թէ աշխատում են կուրորտ եկողների թիւը դիտմամբ պակասեցնել։ Եւ դրա փոխարէն ինչ է տալիս հանքային ջրերի վարչութիւնը հիւանդներին. համարեա թէ ոչինչ. գոնէ աւելացնէին սանիտարական հսկողութիւնը. այդ էլ չը կայ։ Կան տներ, որ սանիտարական մասնաժողովը գուցէ տեսել էլ չէ ամբողջ ամառուայ սեզոնին, իսկ այնտեղ ապրող հիւանդները, թարմ օդի փոխարէն, ուրիշ հոտեր են քաշում... Եթէ այս պլոկացը լինէր միայն հարուստների համար, դարձեալ ոչինչ. քիչ չեն այստեղ այնպիսի հարուստ կանայք, որոնք առանձին աղախիններ են պահում իրանց պատիկ շները ման ածելու համար...

Յովսէփ Խօջայեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Փոխարքան Թագաւոր Կայսրից ստացել է հետևեալ հեռագիրը.

Ցանկանարարում եմ ձեզ, կոմս, յայտնել բոլոր նրանց Իմ շնորհակալութիւնը, որոնք ձեր միջոցով իրանց հաւատարիմ հպատակութեան և նուիրվածութեան զգացմունքները յայտնեցին Ինձ. ՆԻԿՈԼԱՅ.

Այս ամենաողորմած հեռագիրը ստացվել է ի պատասխան Սղնախի գաւառի ազնուականութեան, Բաթումի քաղ. վարչութեան, Սամուրզականի ազնուականների և գիւղացիների, Վաղարշապատ և Իգդիր գիւղերի բնակչութեան, Պեատիգօրսկ, Գէօրգիևսկ քաղաքների բնակչութեան՝ Նորին Մեծութեանը հաւատարիմ հպատակութիւն արտայայտած հեռագիրների։

◆ Օգոստոսի 2-ին փոխարքային ներկայացաւ հրէական մի պատգամաւորութիւն այս կազմով՝ ռաբբի Մարկուս, բժ. Ռամենդիկ և Ս. Ի. Բլխով։

◆ Ուրբաթ, օգոստոսի 1-ին, Մ. Ն. Աթաբէկեանի նախագահութեամբ կայացաւ պահեստիների ընտանիքներին խնամելու համար կազմված գործադիր յանձնաժողովի նիստը։ 36 անդամից ներկայ էին 18-ը։ Նիստի սկզբում Աթաբէկեան մի համառօտ ճառով դիմեց ներկայ եղողներին, որի մէջ մատնանշեց, թէ որպիսի խոշոր մարդասիրական և պատասխանատու գործ է ծանրանում յանձնաժողովի անդամների վրա, ապա նրանց ծանօթացրեց այն օրէնսդրութեան հետ, որը վերաբերում է յանձնաժողովի գործունէութեան։ Նիստը շարունակվեց մինչև ժամը 11-ը երեկոյեան և կազմակերպչական բնոյթ էր կրում։ Ամենքը անհրաժեշտ գտան քաղաքը բաժանել ռայոնների և ամեն մի ռայոնը յանձնել յանձնաժողովի 2—3 անդամին, տալով նրանց իրաւունք՝ իրանց օգնելու կանչել կամաւորներին։ Երկար վիճաբանութիւններ եղան պահեստիների ընտանիքներին նպաստներ տալու ձևի մասին։ Եղան մի շարք առաջարկներ. ի միջի այլոց առաջարկվեց քաղ. վարչութեան մէջ առանձին սեղան դնել պահեստիների ընտանիքները ցուցակագրելու, որի համար ժամանակաւորապէս հրաւիրել գրագիրներ։ Այս առաջարկութիւնը ընդունվեց և որոշվեց հնարաւորութեան չափ առաւել լայն կերպով յայտարարել, որ պահեստիների ընտանիքները կարող են բերանացի կերպով յայտնել իրանց ցանկութիւնը նպաստ ստանալու մասին։ Այդ ժամանակ նպաստ խնդրող կանայք պէտք է պատասխանեն մի քանի հարցերի, որը կը վերաբերի իրանց կարգութեան, ընտանիքին, աշխատանքին և այլն։ Այնուհետև դըրանց թւած բացատրութիւնները քննելու են գործադիր յանձնաժողովի մէջ։

◆ Քաղ. վարչութեան շաբաթ օրվայ նիստում քաղաքագլխի պաշտօնակատարը յայտնեց, որ Նահանգապետը թոյլատրել է պատերազմից վնասվածների օգտին հանգանակութիւն բանալ։ Այդ լսելով, վարչութիւնը որոշեց խնդրել վարչութեան անդամ Գ. Դ. Ժուրուլիին կազմել մի առանձին բիւրօ նուիրաբերութիւններ հաւաքելու համար։ Բիւրօն ստացականներ է տալու այն մարդկանց, որոնք նուիրաբերութիւններ են անելու. քաղ. վարչութեանը կից ընթացիկ հաշիւ է պահվելու նուիրաբերած գումարների մասին, իսկ քաղաքային աճուրդի դահլիճը առ ժամանակ նուիրաբերած իրերի պահեստի է վերածվելու։

◆ Օգոստոսի 6-ին կայանալու է պատերազմից վնասվածներին օգնող կոմիտէտի նիստը, մասնակցութեամբ հասարակական և առևտրական կազմակերպութիւնների ներկայացուցիչների։ Մտադրութիւն կայ կանանց կոմիտէտ կազմել, մանկական ապաստարան և ճաշարան հիմնել և տեղական մի հիւանդանոց բանալ վիրաւորների համար։ Ամենից առաջ կոմիտէտի տրամադրութեան տակ է դրվում քաղ. դումայի կողմից պատերազմական կարիքների համար յատկացրած 90,000 րուբլին։

◆ Քաղ. վարչութիւնը վիրաւորների համար որպէս հիւանդանոց է դարձնելու Ներսիսեան դպրոցին պատկանող Սոլդատսկի բազարի նոր շինութիւնը։ Իսկ Ալեքսանդրեան և Արամեանի անուան հիւանդանոցները առ այժմ թողնվում են քաղաքին, բնակիչ հիւանդների համար։

◆ Միքայէլեան հիւանդանոցին կից Կարմիր Խաչի Ընկ. բացել է ձրի դասընթացքներ 80 գթութեան քոյրեր պատրաստելու համար։ Դասընթացքների բացումից մինչև այժմ բազմաթիւ խնդիրներ են ստացված, որոնց տէրերը խնդրում են իրանց ևս գթութեան քոյր ընդունել. բայց դասընթացքներում տեղ չը կայ։ Այդ պատճառով բացվելու են նոր դասընթացքներ։ Ընդունելութիւնը այժմեանից արդէն սկսվել է և կը շարունակվի մինչև օգոստոսի 7-ը։ Ցանկացողները կարող են գրվել։

◆ Երէկ ոստիկանապետը մօտ 600 ր. գինի ոչնչացրեց Թիֆլիսի երկու խանութում, որոնցից մէկը գտնվում է Վէրայում, իսկ միւսը Հալաբարում։

◆ Հացթուխների աւագը խնդիր ներկայացրեց նահանգապետին և քաղ. վարչութեան, յայտնելով որ ալիւրի պահեստատէրերը ալիւրի գները սկսել են բարձրացնել, այդ պատճառով խնդրում է հացի ֆունտի սակագինը աւելացնել $^1/_2$ կոպէկով։

◆ Ոստիկանապետ Ջդանովսկի յարքունիս գրաւեց գերմանահպատակներին պատկանող երկու աւտոմօբիլ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 31 յուլիսի

1906 թ. իմ խմբագրութեամբ հրատարակվող «Ջարկ» շաբաթաթերթում Լ. Մելիք-Ադամեանը մի շարք ծանր մեղադրանքներ բարդեց Քամալեան Ս.-ի վրա, ես էլ նրա գրածները միայն աչքի առաջ ունենալով՝ սկսեցի արձագանք տալ։ Այժմ, երբ Լ. Մելիք-Ադամեանին հրաւիրում են իր ցանկացած և առաջարկած պետական դատարան՝ իր մեղադրանքները փաստերով և վկաներով հաստատելու, նա անսպասելի կերպով լռում է և խոյս տալիս։ Արդ՝ այդ հանգամանքն ինձ ստիպում է ազդարարելու հետևեալը.

1) Ես այժմ հրաժարվում եմ դատից, թողնելով այդ դատը վարելու իրան՝ Լևոն Մելիք-Ադամեանին, որպէս գլխաւոր բանադրող և դրդապատճառ եղող։

2) «Մշակի» № 153-ում և «. . . .» № 161-ում տպած իմ նամակները՝ դատը ընդունելու մասին՝ չեղած պէտք է համարել և օրէնքի առաջ զօրութիւնը խախտած։

Գր. Բալասանեան

—

Կիսլովօդսկ, 27 յուլիսի

Լինելով Կիսլովօդսկի տղայոց գիմնազիայի ծնողական ժողովի նախագահ, այլ և աղջկանց գիմնազիայի հոգաբարձութեան անդամ, ես շատ մօտ տեսել եմ յիշեալ գիմնազիաներում, ինչպէս և հայոց երկսեռ ծխ. դպրոցում կրօնուսույց ունենալու կարիքը։ Այդ անհրաժեշտութիւնը տեսնում եմ նրա համար, որ գիմնազիաներում ուսանող սերունդը, բառիս ընդարձակ նշանակութեամբ, մեծանում է առանց կրօնի և մանաւանդ առանց հասկացողութիւն ունենալու եկեղեցական պատմութեան մասին։ Դեռ չեմ ասում, որ այդ ուսանող սերունդը զուրկ է մայրենի լեզուն սովորելու հնարաւորութիւնից։

Որպէս նախագահ Կիսլովօդսկի հայոց ծխ. հոգաբարձութեան՝ ես, ինչպէս և տեղիս հայ ծխականները, միշտ էլ զգացել եմ սեփական քահանայ ունենալու կարիքը, որովհետև յաճախ ես գիտեմ դէպքեր, երբ մարդիկ մեռել են առանց ապաշխարանքի, և մի դէպք էլ՝ երբ հանգուցեալը թաղվել է առանց քահանայի. չեմ ասում դեռ այն, որ քաղաքումս թոյլ և հիւանդ ծնված երեխաները կարող են մեռնել։ Որպէս իրաւասու Կիսլովօդսկի քաղաքային վարչութեան և մանաւանդ որպէս ծանօթ տեղացի և եկւոր հայերի ցանկութեան, եկել եմ այն հաստատ համոզման, որ հայոց եկեղեցու կառուցման խնդիրը (յատկապէս այդ նպատակի համար գնած հողաբաժնի վրա, քաղաքի ամենալաւ մասում) երբէք առաջ չի գնայ մինչև մենք չունենանք մեր սեփական քահանան։ Յիշեալ քահանան մի առժամանակ, մինչև եկեղեցու կառուցման աւարտումը, կարող է ժամերգութիւնը կատարել եկեղեցական հողի վրա հանգուցեալ Ս. Ա. Բեզտաուի սեփական միջոցներով կառուցված աղօթատան մէջ։ Կառուցվելիք եկեղեցու մակարդակն էլ վաղուց պատրաստել եմ։

Որպէս տեղական հին մշտական բնակիչ և քաղաքի կողմից կուրորտային կոմիսիայի ընտրված ներկայացուցիչ, պարզ հասկանում եմ, որ մեր ապագայ քահանան պէտք է լինի մեր հայրենական եկեղեցու փայլուն ներկայացուցիչը Կիսլովօդսկ կուրորտում, ուր հաւաքվում են Ռուսաստանի զանազան ծայրերից ամառանոցաւորներ, որոնց մէջ պակաս չեն շատ բարձրաստիճան անձնաւորութիւններ։

Մեր ծխականները քանիցս միջնորդութիւն են յարուցանել Աստրախանի թեմական առաջնորդ Մխիթար եպիսկոպոսի առաջ հաստատելու ընտրված քահանային յանձին Ստաւրօպոլի ծխատէր Սահակ ք. Տէր-Յովհաննիսեանի, սակայն թեմակալ առաջնորդը միշտ էլ մերժել է։ Իմանալով, որ ինձ վրա, որպէս նախագահի ծխ. հոգաբարձութեան, բարոյական պարտականութիւն է ընկած կատարելու Կիսլովօդսկի հայ ծխականների ցանկութիւնը և զգալով իմ անզօրութիւնը այս գործում, շնորհիւ Մխիթար եպիսկոպոսի անհասկանալի մերժման և ընթացք չը տալուն մեր ցանկութեան, ստիպված եմ հրաժարվել Կիսլովօդսկի ծխ. հոգաբարձութեան անդամութիւնից, որի մասին ամսի 14-ին մի ընդարձակ յայտարարութեամբ յայտնել եմ թեմակալ առաջնորդին։

Նախագահ Կիսլովօդսկի հայոց ծխական հոգաբարձութեան՝

Ճարտարապետ Էմ. Խօջայեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

—

Էրզրում, 16 յուլիս

Երէկ դպրոցական չորաբաթիկ բիւջէի խնդրոյ համար հաւաքուած էր գաւառական երեսփոխանական ժողովը։ Դեռ քանի մը օր առաջ Թայֆայական երեսփոխաններ ժողովրդի մէջ տարածեր էին, որ այդ նիստը շատ աղմկալից պիտի ըլլայ և շատ քիթեր պիտի ջարդուին։ Եւ այդ լուրը տարածեր էին անոր համար, որ ժողովուրդը վախնայ ու նիստի ժողովասրահը չգայ, իրենք մինակ մնան և իրենց ուզածին պէս չափեն, ձևեն ու կտրեն՝ ազգի մալին վրայ ղումար խաղան։

Այդ նոյն օրը ժողովասրահին մէջ ասեղ ձգելու տեղ չկար. հոն էին աճապարած թէ բանուորը և թէ գիւղացին, թէ արհեստաւորը և թէ վաճառականը, թէ մտաւորականը և թէ Թայֆայական սոփաջիութիւնը՝ շաբաթ օրուան միջադէպին վայրագութեան հերոսները։

Թայֆայական երեսփոխանները այս անգամ կանակ ունէին, անցեալ ժողովին պէս չէին կծկուած, այլ կը խօսէին առանձին յանդուգն շեշտով. և այդ յանդգնութիւնը այն աստիճան առաջ գնաց, որ օրէնքը, արդարութիւնը, իրաւունքը ոտնատակ տալով՝ սահմանադրութիւնը չճանչնալով իրենց մանածը ներկել կուզէին բռնի ոյժով՝ սոփաջիութեամբ։

Էրզրումի մէջ անուն հանած մէհէնաջի Աստուրեան այդ օրուան հերոսն էր և այդ խարդախ, ազգային ֆաբրիկան տարիներով առանց վարձի սեփականեցուցած պարոնն էր, որ ազգային շահերու մասին կը ճառէր, աշխատաւորութեան շահերուն պաշտպանութեան դիմակը ծածկած...

Առաջնորդին այն նկատողութիւնը, որ ամեն երեսփոխան միևնոյն խնդրոյ վերաբերմամբ ըստ սահմանադրութեան կրնայ միայն 3 անգամ արտայայտուիլ, «իսկ դուք 6—7 անգամ արտայայտուեցաք և դեռ առանց ձայն ստանալու կը շարունակէք արտայայտուիլ և ժողովը ամլութեան ենթարկել և այն ալ չնչին խնդրի մը համար, մինչդեռ մենք դպրոցական բիւջէի որոշման խնդիրը ունինք, որ իր լուծումը կը պահանջէ, վասնզի ուսումնական տարին արդէն մօտ է և ուսումն. խորհուրդը զուրկ է հնարաւորութենէ ոևէ կարգադրութիւն ընել նոր ուսումնական տարուան համար», — անհագին աղմուկ բարձրացուց Թայֆայականներու կողմէ։ Եւ ծայր տուաւ մէկ կողմէ սոփաջիներու և միւս կողմէ ալ ժողովրդի աշխատաւոր և արհեստաւոր դասի մէջ քըքչուքի, և այդ քըքչուքը քանի գնաց՝ այնքան աւելի սաստկացաւ ու վերջը ծեծի փոխուեցաւ։ Համբերութիւնը հատած ժողովուրդը՝ այս անգամ թէ սոփաջիներուն և թէ Թայֆայական երեսփոխաններուն վրայ ինկաւ և զանոնք ծեծելով դուրս վռնտեց ժողովասրահէն, տեսնելով որ ամեն տեղ և ամեն ինչի մէջ ապօրինութիւնն է, որ առաջ կը քշուի, և սահմանադրութիւնն է, որ ոտքի տակ կը տրուի, իսկ բռնի ոյժն է, որ կը թագաւորէ քանի մը կազմակերպուած Թայֆայական խմբերու կողմէ...

Թայֆան այս անգամ գլուխը խոնարհած, վիզը ծռած, իր անզօրութիւնը տրամօրէն խոստովանած հեռացաւ առաջնորդարանի շէնքէն և անմիջապէս հեռագրով միջադէպի ամբողջ յանցաւորն ու պատասխանատուն առաջնորդը ճանչնալով(?) հեռագրով պահանջեց Կ. Պոլսի պատրիարքէն, որ սա հրաժարեցնէ սրբազանը առաջնորդական պաշտօնէ, բայց ամենէն ծիծաղելին այն է, որ այդ հեռագրական պահանջը կընեն 800 մարդու կողմէ, մինչդեռ հաւատացած ու վստահ ենք, որ եթէ հանրագրութեան դիմեն այդ պարոնները, հազիւ թէ կարողանան $^1/_4$-ն անգամ ունենալ իրենց հետ։

Այսպէս վերջացաւ այդ օրուան երեսփոխանական ժողովը։

19 յուլիս

Այսօր միաժամանակ երկու հանրագրութիւն կը պտտի ժողովրդի մէջ. մէկը կը պահանջէ, որ առաջնորդը հեռացուի, իսկ միւսը՝ որ երեսփոխանական Թայֆայական ժողովը լուծուի։ Առաջինը առաջուընէ կարելի է ըսել, որ չպիտի յաջողի և ուսուցիչներու արտաքսման հանրագրութեան պէս ջուրը պիտի իյնայ. երկրորդ հանրագրութիւն նարդէն ապահովուած է 1000 ստորագրութեամբ և դեռ ով գիտէ քանիի կը հասնի։ Պատրիարքարանը պարտական է պատճառաբանել և իրաւացի՝ յենուած սահմանադրութեան վրայ՝ այդ հանրագրութեան ոյժ տալ, որ ըսել է՝ յարգել ազգային սահմանադրութիւնը, այլապէս անխուսափելի պիտի ըլլան նման անցանկալի դէպքերը ներկայ փափուկ վայրկեաններին։

Իրազեկ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՓԵՐԻՑ

—

Ուրմիան եւ իր ազգաբնակութիւնը

I

Ուրմի, 20 յուլիսի

Ուրմիայի լճից ոչ հեռու, 14 վերստ հեռաւորութեան վրա է ընկած Ուրմի քաղաքը։ Բնական գեղեցկութեամբ օժտված, աւելի փարթամ բնութեան յուշարար մի վայր է։ Ջինջ երկնքի տակ օրօրվում են բարձրուղէշ խիտ ծառերի շարանները, որ ամենուրեք յիշեցնում են Բէօկլինի հռչակաւոր նկարներից մէկը՝ «Մեռելների կղզին»։ Գեղեցիկ այգիներն ու ծառուղիները գրկել են քաղաքը և գեղաշար ծառուղիներով միացրել նրան շրջակայ գիւղերի հետ։ Ամեն տեղ ծառերին հետևում է առատ ու վճիտ ջուրը և երգելով լուանում նրանց ոտները։ Ճամբորդը անհագին ճանապարհ է անցնում, առանց տաղտուկի և առանց յոգնածութիւն զգալու։ Այնպէս որ՝ քաղաքից որևէ մօտակայ գիւղ գնալը աւելի շուտ մի հաճոյք է։

Բնութեամբ այդչափ գեղեցիկ, կախարդական մի վայր ցարդ վիճակված լինելով պարսիկ ժողովրդին՝ դարձել է ետ ընկած մի քաղաք։ Փոշոտ, անմաքուր ու անխնամ։ Միայն վերջերս է, որ շնորհիւ ռուսների ազդեցութեան—որ բաւական մեծ թւով զօրք ունեն այդտեղ—մաքրութեան և շէնացնելու ձգտում կայ։ Քաղաքի ներսում տիրապետող անմաքուր օդի ու կեանքի պատճառով քրիստոնեայ ժողովրդի մեծ մասը քաշվել է պարիսպներից դուրս և բնակութիւն հաստատել։ Այդտեղ իր մաքրութեան և շէնութեան տեսակէտից աչքի է ընկնում հայկական մասը, ուր զետեղված են եկւոր հայերը, իսկ բնիկները գտնվում են եկեղեցու շուրջը, քաղաքի ներսում։

Բնակչութեան կարևոր տարրերը կազմում են պարսիկները, ասորիները և հայերը։ Քաղաքակրթութեան լոյսը, որ թափանցում է ամենախուլ ու խաւար անկիւնները, կարծես պարսիկի համար չէ։ Ամենուրեք այդ լոյսը մարդկութեան մտքի և հոգու լոյսից համեմատական չափերով ցրել հեռացրել է դարերի կուտակած խաւարը, յեղաշրջել է կեանքի և ժողովուրդների յարաբերութիւնների մասին ժառանգված հասկացողութիւններն ու ըմբռնումները, բայց պարսիկը մնացել է, ընդհանրապէս, նոյն խաւարամիտ, չաւես և տգէտ ժողովուրդը, ինչ որ դարեր առաջ. դաւանաբանական ու կրօնական նոյն թիւր ու խոտելի պաշտամունքներին ու սովորութիւններին գերի ազգը։ Նա չէ թոյլ տալիս, որ եւրոպական իրերին, գլխաւորապէս ուտելեղէնին, խմիչքեղէնին և նրանց հետ կապված ամանեղէններին դպչի որևէ քրիստոնեայի ձեռք. եթէ դիպչի նա, այդ իրը կը «համարվի» և կը դադարի գործածութիւնից։ Այդպէս է թելադրում նրանց իրանց կրօնը։

Պէտք է չափազանց զգոյշ լինել շուկայում նրանց հետ առևտուր անելիս. չը պէտք է ձեռք տալ այն մթերքներին, որ մուսուլմանը ծախում է. կարող է պատահել չես համաձայնվում առնել, այն ժամանակ «մուրդառ», անգործածելի կը դառնայ փորձածդ իրը։ Եթէ ձեռք տուիր, ուրեմն պիտի առնես չառնես, շատ անգամ զօրով, կրօնական իրաւունքով կը պարտաւորվես վճարել նրա գինը։ Այն հասկացողութիւնն ու վերաբերմունքը, որ նրանք ունեն կնոջ վերաբերմամբ, այն վիճակը, որի մէջ պահում են նրանք իրանց կանանց, ուղղակի մի նախատինք է քաղաքակրթութեան երեսին շպրտուած. բայց թէ ինչե՞ր են կատարվում այդ սև ծածկոցի ու նրանց անձեռնմխելի (քրիստոնէի համար) յարկի տակ, դա արդէն Աստուած գիտէ... Պարսիկներն իրանց կրօնա-ազգայնական ըմբռնումներով քաղաքակրթութեան համար վնասակար խոչընդոտներ են։ Այդպէս է, գոնէ, Ուրմիայում և իմ պատահած տեղերում շատ քիչ բացառութեամբ։

Հ. Ժամկոչ

Խմբագիր-Հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գոլովին, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.։
Ձ. Ի. ԲԱԲԱՆՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
Ց. Ց. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. երկուշ. չորեքշ. ուրբաթ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Ց. Ց. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—71

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Գոյութիւն ունի 1895 թ.
Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։
Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ԱՄՍԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ ամենօրեայ պարապմունքներով։
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին
Ատեստատներ տրվում են մինիստրութեան թոյլտւութեամբ։
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1914 թ.։
Խնդրագիրների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։
Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։
Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզւի և թւաբանութեան համար։
Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну. Николаевская, 22, Телефонъ 7—44. (Կ.Հ.Ե.) 749. 0—1

Թիֆլիսի Մանրաշեան Առևտրական Դպրոց
(Բէբուտովսկայա, № 50)
Քննութիւնները օգոստոսի 25-ից ս. թ.։ Դպրոցն ունի պատրաստական բաժանմունք։
(Հ. Կ.) 746. 5—1

ՇԱՐԺԻՉՆԵՐ
ԱԿՑ. ԸՆԿ. Тифлис. Метал. Заводъ
Ինժեներ Գ. Զ. ԵԱՐԱԼԵԱՆ և ԸՆԿ.
Թիֆլիս, Կվիրիլսկայա, № 9, սեփ. տուն
Տելեֆոն գործարանի № 9. Կառավարչի բնակարան 14—78.
Գործարանը պատրաստում է եւ կառուցանում տրանսմիսսիաներ, Փրիկցիոն մուֆտաներ, սեղմիչ ճախարակներ, ճախարականիւներ, շարժիչ-ձեւեր, ատամնաւոր անիւներ, ռեգուլյատորներ, փոկեր եւ այլն։
(Ե.) 175. 25—18
ՋՐՀԱՆՆԵՐ

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный